© 2019 Զեկույցը հրապարակվել է
«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության կողմից

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք.
Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

URL: http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Խմբագրակազմ

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան
Ծրագրի համակարգող՝ Մանե Գրիգորյան
Ծրագրի փորձագետ՝ Արթուր Սուքիասյան
Ծրագրի փորձագետ՝ Դիանա Տեր-Ստեփանյան
Խմբագիր՝ Վահագն Անտոնյան
Անգլերեն տարբերակի թարգմանիչ՝ Լուսինե Պողոսյան

Մշտադիտարկումն իրականացվում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում» նախաձեռնության շրջանակներում:

Նախագիծը հովանավորվում է Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության կողմից՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Խաղաղության երկխոսություն

Deutsche Botschaft Eriwan

Auswärtiges Amt

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը և այն չի արտացոլում Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության տեսակետները:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թթ. գործողությունների ծրագրի» շրջանակներում պաշտպանության նախարարության միջոցառումների մշտադիտարկումն իրականացնող խմբի

ավարտական զեկույցը

Խաղաղության երկխոսություն

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թթ. գործողությունների ծրագրի» շրջանակներում պաշտպանության նախարարության միջոցառումների մշտադիտարկումն իրականացնող խմբի

ավարտական զեկույցը

© 2019 Զեկույցը հրապարակվել է
«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության կողմից

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք.
Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

URL՝ http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Խմբագրակազմ

Ծրագրի տնօրեն՝ **Էդգար Խաչատրյան**
Ծրագրի համակարգող՝ **Մանե Գրիգորյան**
Ծրագրի փորձագետ՝ **Արթուր Սուքիասյան**
Ծրագրի փորձագետ՝ **Դիանա Տեր-Ստեփանյան**
Խմբագիր՝ **Վահագն Անտոնյան**
Անգլերեն տարբերակի թարգմանիչ՝ **Լուսինե Պողոսյան**

Մշտադիտարկումն իրականացվում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում» նախաձեռնության շրջանակներում:

Նախագիծը հովանավորվում է Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության կողմից՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Խաղաղության երկխոսություն

Deutsche Botschaft Eriwan

Auswärtiges Amt

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը և այն չի արտացոլում Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության տեսակետները:

Վանաձոր 2019

Բովանդակություն

Հապավումներ 4
Ներածություն 5

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի մասին 6
Մշտադիտարկման խմբի մասին 7

Մշտադիտարկման մեթոդաբանությունը 9

Խմբի նկատառումները «ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի» բովանդակային կառուցվածքի, գործողությունների շարունակականության եւ արդյունքների չափելիության վերաբերյալ 12

ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի ընթացքի մշտադիտարկումն իրականացնելու համար քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հնարավորությունները եւ պետական մարմինների հետ համագործակցությունը 18

ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանության նախարարության կողմից իրականացվող գործողությունների ուսումնասիրության արդյունքները 24

Կետ 28. Մշակել մեխանիզմներ զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման համար 25
Կետ 29. Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ 32
Կետ 30. «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառել ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ապահովել հեռաուսուցման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դրա հասանելիությունը 36
Կետ 31. Ապահովել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ՝ մշակելով ծանուցագրի հետ միաժամանակ զորակոչիկներին զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու և այլ իրավունքները պարզաբանող հուշաթերթի տրամադրման կարգ 40
Կետ 32. Ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը 47
Կետ 33. Հստակեցնել առանձին հիվանդությունների բնութագրերը/հատկանիշները, որոնց առկայության դեպքում զինապարտը կարող է ձեռք բերել տարկետում 52
Կետ 34. Ապահովել զորակոչիկի, զինծառայողի և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (տույժի և այլնի) վերաբերյալ պարտադիր ծանուցումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև մշակել դրանց բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու համակարգ 60

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ մշտադիտարկող խմբի առաջարկությունները 66

Հավելվածներ 72

Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ 73

Հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԽԵ	«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՄԻՊ	մարդու իրավունքների պաշտպանություն
ՄԻՊ ԳԾ	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիր
ՊՆ	պաշտպանության նախարարություն
ԶՈՒ	զինված ուժեր
ԿՌԲՀ	կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով
ԱԺ	Ազգային ժողով
ԱԽ	Անվտանգության խորհուրդ
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՆԶՊ	նախնական զինվորական պատրաստություն
ԵԽՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե
ՌՈՒՀ	ռազմաուսումնական հաստատություն
ՌՈ	ռազմական ոստիկանություն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն

Ներածություն

Հարգելի ընթերցող,

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության (ԽԵ) «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում» նախաձեռնության շրջանակներում ձեւավորված մշտադիտարկող խմբի ավարտական զեկույցը՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի» (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ:

Շուրջ 10 տարի «ԽԵ»-ն իրականացնում է Հայաստանում ժողովրդավարության կայացմանը, մարդու իրավունքների՝ որպես արժեք ձեւավորմանն ու զանազան խոցելի խմբերի շահերի եւ իրավունքների պաշտպանությանն ուղղված բազմաթիվ ծրագրեր եւ նախաձեռնություններ: Ստեղծման օրից կազմակերպության ռազմավարական նպատակներից են եղել.

- **պրոակտիվ քաղաքացիական, իրավապաշտպանական եւ խաղաղասիրական ներուժի զարգացումը,**
- **մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը,**
- **պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացների վրա քաղաքացիական վերահսկողության սահմանումը, եւ այլն:**

Կազմակերպության առանձնակի ուշադրության կենտրոնում են գտնվում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները, քանի որ այս ոլորտի նկատմամբ քաղաքացիական հասարակության կողմից վերահսկողություն իրականացնելու մեխանիզմների բացակայության պարագայում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ոտնահարման վտանգները չափազանց մեծ են: Ելնելով վերոնշյալից՝ այս ոլորտում կազմակերպության նախաձեռնությունների զգալի մասն ուղղված է մարդու իրավունքների մշտադիտարկման միջոցով հանրային քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը:

2018 թ. սեպտեմբերին «ԽԵ»-ն նախաձեռնեց **«Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում»** նախագիծը, որը քաղաքացիական հասարակության կողմից **«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի»** շրջանակներում ՊՆ գործունեության մշտադիտարկում իրականացնելու համար արդյունավետ մեխանիզմներ մշակելու նպատակ է հետապնդում:

Նախագծի շրջանակներում նախատեսված էր.

- **Ստեղծել անկախ մշտադիտարկման խումբ՝ ՄԻՊ գործողությունների ծրագրի շրջանակներում ՊՆ-ի կողմից իրականացվող միջոցառումների շարունակական մշտադիտարկում իրականացնելու համար,**
- **Մշտական տեխնիկական եւ մեթոդական աջակցություն ցուցաբերել մոնիթորինգի խմբի արդյունավետ գործունեության համար,**
- **Ապահովել անընդհատ եւ հետեւողական օգնություն քաղաքացիներին, որոնց իրավունքները խախտվել են զինվորական ծառայության ընթացքում,**
- **Բարձրացնել ՀՀ ՊՆ պաշտոնյաների, պատգամավորների, ՀՀ քաղաքացիների եւ համապատասխան միջազգային դերակատարների իրազեկվածությունը ՄԻՊ գործողությունների ծրագրի հաջողությունների եւ ձախողումների վերաբերյալ, ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել:**

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի մասին

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ գործադիր մարմինների գործողություններն առավել համակարգված և արդյունավետ դարձնելու նպատակով՝ 2017թ. մայիսի 4-ին ընդունված կառավարության N 483-Ն որոշմամբ հաստատվել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագիրը»[1]:

Այն սահմանում է թվով 96 գործողություն, որոնցից յուրաքանչյուրի համար նշված են իրականացման ժամանակացույցը, չափանիշները, ակնկալվող արդյունքներն ու պատասխանատու մարմինները:

Ծրագրի մշտադիտարկման և համակարգման նպատակով ՀՀ կառավարության կողմից ստեղծվել է համակարգող խորհուրդ, որը բաղկացած է կառավարության տարբեր օղակների և պետական մարմինների ներկայացուցիչներից: Համակարգող խորհրդի գործունեության կարգը, ինչպես նաեւ նպատակը, կազմը եվ գործառույթները սահմանված են «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ, ըստ որի համակարգող խորհուրդը՝

1. **լսում և քննարկում է** պատասխանատու հանրապետական գործադիր

1. Տես՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշումը: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113223)

մարմինների և օրենքով ստեղծված պետական մարմինների կողմից ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային զեկույցները,

2. ու**սումնասիրում և քննարկում է** պատասխանատու հանրապետական գործադիր և օրենքով ստեղծված պետական մարմինների կողմից ծրագրով նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ կիսամյակային գրավոր հաշվետվությունները,

3. **կազմակերպում է** պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների և օրենքով ստեղծված պետական մարմինների կողմից ծրագրով նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ կիսամյակային գրավոր հաշվետվությունների հանրային քննարկումներ,

4. պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների և օրենքով ստեղծված պետական մարմինների հաշվետվություններն ուսումնասիրելուց և քննարկելուց հետո **կարող է ներկայացնել առաջարկություններ** ծրագրի կատարման արդյունավետությունը խթանելու և կատարմանը նպաստելու համար:

Ըստ հայեցակարգի, յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո, 5-օրյա ժամկետում, պատասխանատու մարմինները ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացնում գրավոր հաշվետվություններ՝ հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների կատարման ընթացքի մասին, իսկ համակարգող խորհուրդը յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպում է քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվում են գերատեսչությունների կողմից կատարված աշխատանքները:

Հայեցակարգով նախատեսված է նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ համակարգող խորհրդի կողմից կիսամյակային կտրվածքով հանրային քննարկումների կազմակերպում՝ նպատակ ունենալով հարթակ ձեւավորել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից ծրագրի ընթացքի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնելու համար:

Մշտադիտարկման խմբի մասին

«Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում» նախագծի շրջանակներում ձեւավորված մշտադիտարկող խումբը բաղկացած է իրավապաշտպան եւ լրատվական հասարակական կազմակերպությունների յոթ ներկայացուցիչներից:

Խմբի անդամներն են (ըստ այբբենական հերթականության)՝
Անի Սարգսյան, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հկ մասնաճյուղ, Կապանի քաղաքացիական երիտասարդական կենտրոն,
Անուշ Հակոբյան, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հկ,

Էդուարդ Դանիելյան, իրավապաշտպան,
Ազնիվ Սիրադեղյան, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հկ,
Ժաննա Ալեքսանյան, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հկ,
Մարիա Գալստյան, «Խաղաղության երկխոսություն» հկ,
Շահանե Խաչատրյան, «Անկախ լրագրողների ցանց» հկ,
Ռուբեն Մարտիրոսյան, «Խաղաղության երկխոսություն» հկ

Խմբի փորձագետներն են՝
Արթուր Սուքիասյան, փաստաբան,
Դիանա Տեր-Ստեփանյան, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հկ, հետազոտությունների համակարգող,
Մուշեղ Շուշանյան, փաստաբան

Նախագծի տնօրեն՝
Էդգար Խաչատրյան, «Խաղաղության երկխոսություն» հկ,

Ծրագրի համակարգող՝
Մարիաննա Խաժակյան, «Խաղաղության երկխոսություն» հկ

Մշտադիտարկման մեթոդաբանությունը

Ելնելով «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում» նախագծի տրամաբանությունից՝ խմբի կողմից իրականացվող մշտադիտարկումը նպատակ ունի ուսումնասիրել-վերհանել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում ընդունված իրավական կարգավորումներում եւ իրավակիրառ պրակտիկայում առկա բացթողումները եւ բացահայտված թերությունների վերացմանն ուղղված առաջարկությունների փաթեթ մշակել:

Ավարտական զեկույցում ընդգրկվել են ծրագրում ներառված այն միջոցառումների ուսումնասիրության տվյալները, որոնց իրականացման համար պատասխանատու մարմին է հանդիսացել ՀՀ պաշտպանության նախարարությունը: Այսպիսով, զեկույցի պատրաստման ընթացքում մշտադիտարկող խմբի կողմից ուսումնասիրվել են 2017թ. մայիսի 4-ին ընդունված կառավարության N 483-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 28, 29, 30, 31, 32, 33 եւ 34 գործողությունները[2]:

Ուսումնասիրություններն իրականացվել են երեք հիմնական ուղղություններով՝

- **Փաստաթղթերի վերլուծություն.** ուսումնասիրվել են «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ ՊՆ ուղղված գրավոր հարցումների վերաբերյալ ստացված պատասխան գրությունները,
- **Իրավական վերլուծություն.** ուսումնասիրվել են ՊՆ-ի կողմից վկայակոչված իրավակարգավորումները եւ ոլորտը կարգավորող այլ օրենսդրական եւ ենթաօրենսդրական ակտերը,
- **Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություն.** ուսումնասիրվել է ոլորտը կարգավորող օրենսդրության պրակտիկ կիրառումը վկայակոչված նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների սուբյեկտների նկատմամբ, այլ կերպ ասած՝ թե ինչպես են կիրառվում ընդունված իրավական ակտերը շահառու խմբերի նկատմամբ:

Ավարտական զեկույցի մշակման ընթացքում տեղեկությունների հավաքագրումն իրականացվել է երեք հիմնական մեթոդներով.

1. **Փաստաթղթերի ուսումնասիրության** շրջանակներում վերլուծության են ենթարկվել «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ ՊՆ-ն ուղղված գրավոր հարցումների պատասխաններն ու դրանցում վկայակոչվող իրավական նորմերը, ինչպես նաեւ այլ իրավական ակտերը,

2. **Ստանդարտացված հարցազրույցների** իրականացում՝ վկայակոչված նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների սուբյեկտների հետ (տվյալ զեկույցի համատեքստում իրավահարաբերությունների

2. Տես՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 483-Ն որոշումը: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113223)

սուբյեկտ են հանդիսացել, օրինակ, զորակոչիկները): ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում մշակված իրավական ակտերի պրակտիկ կիրառումն ուսումնասիրելու նպատակով նշված նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների սուբյեկտների հետ անցկացվող հարցումների համար ընտրությունն իրականացվել է ձնակույտի մեթոդով: Ներկայացուցչական ընտրանքի անհնարինությունը պայմանավորված է ոլորտի առանձնահատկություններով, քանի որ ոլորտում առկա են տեղեկատվության գաղտնիության հետ կապված որոշակի սահմանափակումներ: Ելնելով վերոնշյալից՝ ծրագրում տեղ գտած զորակոչի կազմակերպմանն առնչվող գործողությունների ուսումնասիրության նպատակով թվով 290 զորակոչիկների եւ նրանց ընտանիքների անդամների շրջանում իրականացվել են հարցումներ: Զինկոմիսարիատներում, բժշկական հետազոտություն իրականացնող հիմնարկներում եւ այլ վայրերում, խմբի անդամներին հաջողվել է հանդիպել 100 զորակոչիկի հետ ձմեռային, եւս 190-ի հետ՝ ամառային զորակոչի ընթացքում: Մշտադիտարկումն իրականացնելու համար, մարդկային ռեսուրսների սղության պատճառով, ուսումնասիրություններն իրականացվել են Լոռու, Սյունիքի մարզերի եւ Երեւան քաղաքի կտրվածքով, այսինքն՝ ընտրվել է մեկ հարավային, մեկ հյուսիսային մարզ եւ մայրաքաղաքը:

3. **Իրավական աջակցություն** է ցուցաբերվել թվով 38 քաղաքացիների ծրագրի իրականացման 12 ամիսների ընթացքում, որոնցից 5-ի պարագայում ծրագրում ներգրավված փաստաբանները, լիազորագրի հիման վրա, ներկայումս իրականացնում են դիմած քաղաքացիների ներկայացուցչությունն ու պաշտպանությունը դատական ատյաններում: Իրականացված խորհրդատվությունների ընթացքում ձեռք բերված տեղեկությունները նույնպես հանդիսացել են տեղեկատվության աղբյուր՝ մշտադիտարկման իրականացման ընթացքում:

Խմբի նկատառումները «ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի» բովանդակային կառուցվածքի, գործողությունների շարունակականության եւ արդյունքների չափելիության վերաբերյալ

Դատելով «ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2017 թ. մայիսի 4-ի N 483-Ն որոշման ընդունման պահին գործող ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշման՝ «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույց» խորագիրը կրող հավելվածի[3] «Ռազմավարությունների կազմման մեթոդական ցուցումներ» բաժնում ներկայացված դրույթներից, ՀՀ կառավարության կողմից մշակվող ռազմավարություններում պետք է.

1. հստակ սահմանված լինի ռազմավարության հիմնական նպատակը,
2. հստակ մատնանշվեն իրականացվելիք գործողությունները,
3. նշվեն ռազմավարության շահառուների (շահառու խմբերի) անվանումները/անունները եւ վերջիններիս հետ քննարկումների արդյունքները,
4. նկարագրվեն մատուցվող ծառայությունները (առկայության դեպքում),
5. նշվեն ռազմավարության կատարողականի ցուցանիշները,
6. սահմանվեն ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ղեկավարման, մոնիթորինգի եւ դրանց հաշվարկների իրականացման ընթացակարգերը,
7. նշվեն ռազմավարությամբ իրականացվող միջոցառումների փուլերի հստակ ժամկետները, կոնկրետ փուլի ավարտին ակնկալվող իրավիճակը եւ արդյունքը,
8. ներկայացվեն ռազմավարության իրականացման հետ կապված ռիսկերը:

Ըստ էության, գործողությունների/միջոցառումների ծրագիրը մշակվում է ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով և այն հիմնված է լինելու գոյություն ունեցող ռազմավարության վրա եւ բխելու է դրանում սահմանված առաջնահերթություններից եւ նպատակներից:

ՄԻՊ ԳԾ գործողությունների բովանդակային հիմնավորումն ապահովող փաստաթուղթ է հանդիսանում «ՄԻՊ ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» 2012թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ նախագահի կողմից ստորագրված կարգադրությունը[4], որի հավելվածում ներկայացված է փաստացի մինչ այժմ գործող ՄԻՊ ազգային ռազմավարությունը: Ըստ այս փաստաթղթի, ռազմավարությունը մշակվել է **Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի միասնական և համապարփակ քաղաքականության իրականացումն ապահովելու նպատակով:**

Նշվող նպատակին հասնելու համար, ըստ փաստաթղթի, անհրաժեշտ է.

1. ունենալ միասնական մեկ քաղաքական փաստաթուղթ, որը կհամակարգի մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տարվող հիմնական քաղաքականությունը,
2. մարդու իրավունքների պաշտպանության տարբեր բնագավառներում առկա խնդիրներին տալ թիրախային լուծումներ՝ քաղաքականության շարունակականությունն ապահովելու նպատակով:

3. Տես՝ ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշման հավելվածը. (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2015/01/2-5_1ardz.pdf?fbclid=IwAR2BovZTb3K2HrXB8relNq6sfU2J9TT4zn-qLckkbZzEolDkiMloLBaAf3-4)
4. Տես՝ ՀՀ Նախագահի կարգադրությունը մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին. (https://www.arlis.am/documentview.aspx?docID=79027)

Պետք է արձանագրել, որ նշվող փաստաթղթում սահմանված են իրականացվելիք միջոցառումների նպատակները, խնդիրները, ինչպես նաեւ ռազմավարության հիմնական սկզբունքներն ու գերակայություններն՝ ըստ շահագրգիռ խմբերի: Նշված են նաեւ նախատեսվող միջոցառումների հիմնական ուղղվածությունները, սակայն, ձեւակերպած չէ, թե մասնավորապես ինչ ժամանակահատվածի համար են սահմանվում նշվող առաջնահերթություններն ու գործողությունները: Բացի այդ, ռազմավարության սկզբունքները բաժնում սահմանված չէ որեւէ պատասխանատվություն՝ պետական մարմինների կողմից ռազմավարությամբ նախանշված գործողությունների նախատեսված կարգով եւ ժամկետներում չկատարելու համար:

Հարկ է նշել, որ նախորդ տարիների ընթացքում ԽԵ-ն մշտադիտարկել է նաեւ նույն ռազմավարությունից բխող 2014-2016թթ. գործողությունների ծրագրով[5] սահմանված պաշտպանական գերատեսչության կողմից իրականացվող գործողությունները: Հետաքրքրական է, որ այդ փաստաթղթում ներառված շատ գործողություններ այլեւս տեղ չեն գտել նոր ծրագրում, անգամ այն դեպքում, երբ սահմանված ժամկետի ավարտին դրանցից որոշներն այդպես էլ չեն կատարվել: Կարելի էր եզրակացնել, որ որոշ գործողություններ հանվել էին ոլորտը կարգավորող օրենսդրության փոփոխության կամ արդիականությունը կորցնելու հետեւանքով: Շատ դեպքերում, սակայն, գործողությունը հանելու տրամաբանությունը որեւէ կերպ հիմնավորված չէ: Օրինակ, 2014-2016թթ. գործողությունների ծրագրի 35-րդ՝ **«Ուժեղացնել զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների արգելման և վերացման համար ձեռնարկվող միջոցները և ապահովել ոչ կանոնակարգային հարաբերությունների և զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան բոլոր դեպքերի արագ, անաչառ և մանրամասն հետաքննություն»** կետը որեւէ կերպ տեղ չի գտել 2017-2019թթ. գործողությունների ծրագրում: Հարկ է նշել, որ այս կետով մատնանշվող գործողությունների արդյունքում ակնկալվում էր զինված ուժերում արտականոնադրային հարաբերությունների վերացում, զինված ուժերում կանխարգելիչ միջոցառումների իրականացում, վերապատրաստումներ՝ ուղղված խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքի մասին տեղեկացվածության բարձրացմանը: Նույն՝ 2014-2016թթ. գործողությունների ծրագրի 108-րդ կետով սահմանվել էր, որ մինչև 2016թ. երկրորդ կիսամյակը վերանայվելու է **«Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի շրջանակներում զինծառայողների իրավունքների և պարտականությունների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ թեմաները և դասավանդման մեթոդիկան:** Ըստ ՊՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության, այս գործողության շրջանակներում նախատեսվում էր նաեւ ռազմագիտության դասագրքի վերանայում, ինչը չի արվել: Ավելին, 2017-2019թթ. գործողությունների ծրագրում այդ կետը չներառվեց: Պետք է արձանագրել, որ առանց որեւէ վերլուծական հիմնավորման գործողությունների ընդհատումների այսպիսի օրինակները բավականին շատ են:

Գործողությունների ծրագրի իրականացման մոնիթորինգի արդյունքների,

5. Տես՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը. (https://www.arlis.am/documentview.aspx?docID=92644)

դրանց կատարողականների կամ եռամյա միջոցառումների ծրագրերի միմյանց հետ ունեցած տրամաբանական կապերը տեսանելի դարձնող, հանրության դատին ներկայացված վերլուծության բացակայության պարագայում անհասկանալի է մնում, թե ո՞րն է 2017-2019թթ. գործողությունների ծրագրում այս եւ նմանատիպ այլ գործողություններ չներառելու, դրանց փոխարեն՝ նորերը ներառելու հիմնավորումը: Արդյո՞ք պաշտպանական գերատեսչության վերլուծությունները ցույց են տվել, որ զորամասերում վերացել կամ, գոնե, նվազել են արտականոնադրային հարաբերությունների դրսեւորումները, արդյո՞ք վերացել է ռազմագիտության դասագրքերում զինվորական ծառայության ընթացքում մարդու իրավունքների մասին խոսելու կամ խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքի մասին տեղեկացվածության բարձրացմանն ուղղված գործողությունների անհրաժեշտությունը: Նմանատիպ օրինակները մատնանշում են, որ ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի մշակման ընթացքում պաշտպանական գերատեսչության կողմից պարզապես անտեսվել է ռազմավարական փաստաթղթերի նպատակներից մեկը՝ **քաղաքականության շարունակականությունն ապահովելու նպատակը**:

Օբյեկտիվության համար հարկ է նշել, որ ՄԻՊ ռազմավարությունից բխող գործողությունների 2014-2016թթ. ծրագրում ներառված որոշ գործողություններ, այնուամենայնիվ, տեղ են գտել 2017-2019թթ. ծրագրում: Օրինակ, նախորդ ծրագրի 110-րդ եւ նորի 29-րդ կետերն առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման մասին են: 2014-2016թթ. գործողությունների ծրագրի 110-րդ կետով նախանշված գործողությունը սահմանված ժամկետում չէր իրականացվել եւ տեղ էր գտել հաջորդ երեք տարվա համար նախատեսվող գործողությունների շարքում, սակայն, եթե 110-րդ կետում պաշտպանական գերատեսչության կողմից նախատեսվում էր մշակել իրավական ակտ, որով կսահմանվեր փաստաթղթերի տրամադրման **7-օրյա ժամկետ**, ապա 2017-2019թթ. ծրագրի 29-րդ կետում փաստաթղթերի տրամադրման համար **ողջամիտ ժամկետի** սահմանման մասին է խոսք գնում միայն, ինչը չափելիության տեսանկյունից ավելի անհստակ է եւ անորոշ: Կրկին, վերլուծական հիմքի բացակայության հետեւանքով անհասկանալի է մնում, թե ո՞րն է եղել գործողության եւ ակնկալվող արդյունքի ձեւակերպման փոփոխության պատճառը:

Ընդանրապես, ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրում տեղ գտած **գործողությունների չափելիության** հետ կապված խնդիրներն արժանացել են խմբի հատուկ ուշադրությանը: Պաշտպանական գերատեսչության կողմից 2017-2019թթ. իրականացվելիք գրեթե բոլոր գործողությունների համար մշակված կատարման վերստուգելի չափանիշները հնարավորություն չեն տալիս չափելու գործողությունների արդյունավետությունը, հասկանալ, թե արդյո՞ք գործողության իրականացումը տանում է շահառու խմբի կամ խմբերի իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը: Անհստակություններից խուսափելու եւ գործողությունների արդյունքների չափելիությունն ապահովելու նպատակով յուրաքանչյուր գործողության համար պետք է սահմանված լիներ հստակ եւ չափելի ցուցանիշ, որի վրա հիմնվելով միայն հնարավոր կլիներ իրականացնել արդյունավետ մոնիթորինգ եւ կազմակերպել ծրագրի իրագործման գնահատումը: Ըստ վերոնշյալ «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի», այլ կարեւորագույն պահանջների

հետ մեկտեղ, ռազմավարական փաստաթղթում պետք է նշված լինեին ռազմավարության կատարողականի ցուցանիշները, սահմանված լինեին նախատեսվող միջոցառումների ղեկավարման, մոնիթորինգի եւ դրանց հաշվարկների իրականացման ընթացակարգերը: Հարկ է նշել, որ նման ընթացակարգեր սահմանված չեն ո՛չ բուն ռազմավարությունում, ո՛չ էլ ծրագրի մշտադիտարկման և համակարգման համար պատասխանատու համակարգող խորհրդի գործունեության կարգը սահմանող ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ: Նման ցուցանիշների անհստակության եւ մոնիթորինգի իրականացման գործուն եւ իրատեսական մեխանիզմի բացակայության պարագայում հասկանալի չէ, թե ի՞նչ չափանիշներով, եւ ի՞նչ արդյունավետության ցուցիչների հիման վրա է իրականացվել եւ իրականացվում մոնիթորինգը կառավարության տարբեր օղակների և պետական մարմինների ներկայացուցիչներից կազմված համակարգող խորհրդի կողմից:

Ռազմավարական փաստաթղթում չկա նաեւ անդրադարձ ռազմավարության իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերին, նախանշված չեն մեխանիզմներ դրանց դիմակայելու համար: Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ սահմանված ՄԻՊ ԳԾ-ի համակարգող խորհրդի գործունեության կարգում նշված է, որ **պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների և օրենքով ստեղծված պետական մարմինների կողմից ներկայացված կիսամյակային գրավոր հաշվետվությունները պետք է ներառեն ամփոփ տեղեկություններ ծրագրով նախատեսված աշխատանքների ընթացքի այն ռիսկերի կամ հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք խոչընդոտում կամ վտանգի տակ են դնում ծրագրով նախատեսված գործողության հաջող կատարման ընթացքը:** Վերոնշյալ կիսամյակային հաշվետվությունները, սակայն, հասանելի չեն արդարադատության նախարարության կայքում, իսկ կայքում առկա ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում կայացած համակարգող խորհրդի երեք նիստերի արձանագրություններում ռիսկերի քննարկման վերաբերյալ հիշատակումներ գրեթե չեն հանդիպում:

Վերը շարադրվածն ամփոփելով՝ խումբը եկել է եզրահանգման, որ գոյություն ունեցող ռազմավարությունում

- **ապահովված չէ ՄԻՊ ռազմավարությունից բխող գործողությունների 2014-2016թթ. եւ 2017-2019թթ. ծրագրերի միջեւ տրամաբանական փոխկապակցվածությունը. գործողությունները շատ դեպքերում կրում են հատվածային բնույթ,**

- **հանրության համար հասանելի չեն ՄԻՊ ԳԾ-ի շրջանակներում պաշտպանության նախարարության կողմից իրականացվող գործողությունների կատարողականների վերաբերյալ ուսումնասիրությունների տվյալները եւ մոնիթորինգի համար պատասխանատու համակարգող խորհրդի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքներն ու վերլուծությունները, ինչի հետեւանքով անհասկանալի է դառնում գործողությունների շարունակականության ապահովման տրամաբանությունը,**

- **հստակ չեն ռազմավարության կատարողականի ցուցանիշները եւ մոնիթորինգի ու գնահատման մեխանիզմները, ինչը**

նվազեցնում է արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու հնարավորությունները թե՛ պատասխանատու պետական մարմինների, թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար,

- **իրավական որեւէ հետեւանք սահմանված չէ պետական մարմինների կողմից ռազմավարությամբ նախանշված գործողությունները՝ նախատեսված կարգով եւ ժամկետներում չկատարելու համար,**

- **ռազմավարական փաստաթղթում հաշվի չեն առնվել գործողությունների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերը եւ նախատեսված չեն մեխանիզմներ դրանց չեզոքացման կամ նվազեցման ուղղությամբ:**

ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի ընթացքի մշտադիտարկումն իրականացնելու համար քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հնարավորությունները եւ պետական մարմինների հետ համագործակցությունը

«ՄԻՊ ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» 2012 թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ նախագահի կողմից ստորագրված կարգադրության «Ռազմավարության հիմնական սկզբունքները» բաժնում մասնավորապես նշված է, որ **«Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման նպատակով պետական իշխանության պատասխանատու մարմինների կողմից ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման, մոնիթորինգի և գնահատման ընթացքում կներգրավվի քաղաքացիական հասարակությունը՝ համապատասխան կազմակերպությունների միջոցով»:**

Դեռեւս մինչ «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում» ծրագրի մեկնարկը, ԽԵ-ն պաշտոնապես տեղեկացրել էր պաշտպանության նախարարությանն այդ նախաձեռնության գաղափարի մասին եւ հայցել գերատեսչության աջակցությունը ծրագրով նախատեսվող գործողությունների մոնիթորինգի իրականացման ընթացքում: Պատասխան նամակում արձագանքը դրական էր, պատրաստակամություն էին հայտնել մշտադիտարկում իրականացնելու աշխատանքներում աջակցել մոնիթորինգային խմբին:

Հարկ է նշել, որ ծրագրի իրականացման ընթացքում, հատկապես կազմակերպության կողմից ուղարկվող պաշտոնական հարցումներին եւ գրություններին պատասխանելու հարցում, պաշտպանության նախարարությունն, ընդանուր առմամբ, դրսեւորել է համագործակցային մոտեցում. նախարարությանն ուղղված գրեթե ոչ մի գրություն չի մնացել անպատասխան՝ չնայած այն բանին, որ գրությունների պատասխանները հաճախ ուղարկվում էին ուշացումով (չէին համապատասխանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով[6] սահմանված ժամկետներին), երբեմն էլ պատասխան գրությունները չէին պարունակում հարցման մեջ նշվող բոլոր հարցերի սպառիչ պատասխանները:

Ողջունելի է նաեւ փաստը, որ ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական գերատեսչության կողմից իրականացվելիք գործողությունների համար պատասխանատու ՀՀ ՊՆ ստորաբաժանումների ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն են ունեցել մշտադիտարկման մեթոդաբանության մշակման աշխատանքներում: 2018 թ.-ի նոյեմբերին ԽԵ-ի կողմից կազմակերպված աշխատանքային հանդիպման շրջանակներում ՊՆ ստորաբաժանումների պատասխանատուները ներկայացրեցին ՄԻՊ 2017-2019 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում իրենց ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքներն ու դրանց արդյունքում ընդունված իրավական ակտերը, պատասխանեցին խմբի անդամների կողմից բարձացված հարցերին: Հարկ է նշել նաեւ, որ ծրագրի իրականացման ընթացքում ամրապնդվեց համագործակցությունը ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի հետ, որի ջանքերով համակարգվում են ՄԻՊ 2017-19թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական գերատեսչության կողմից իրականացվող միջոցառումները:

6. Տես՝ «ՀՀ օրենքը տեղեկատվության ազատության մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372)

ՄԻՊ 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության միջոցառումների մշտադիտարկման վերաբերյալ խմբի միջանկյալ զեկույցը, որը հրապարակվել է 2019թ.-ի մարտին, ծրագրի անձնակազմի կողմից ուղարկվել էր ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի, պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովներ, ինչպես նաեւ պաշտպանության նախարարություն: Հարկ է նշել, որ միջանկյալ զեկույցում բարձրացված խնդիրներն ու ներկայացված առաջարկությունները արժանացան ԱԺ վերոնշյալ հանձնաժողովների եւ ՀՀ անվտանգության խորհրդի (ԱԽ) գրասենյակի ներկայացուցիչների ուշադրությանը:

Այժմ քննարկումներ են ընթանում ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական գերատեսչության գործողությունների մշտադիտարկման շրջանակներում ԱԺ-ի, ԱԽ-ի, ինչպես նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ ավելի սերտորեն համագործակցելու համար, քանի որ այդ մարմիններն ուղղակի լիազորություններով են օժտված Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականության մշակման եւ իրականացման ոլորտում:

Պաշտպանության նախարարին ուղղված 22.07.2019թ. Ելից-ՊՆ-19/10 գրությամբ ԽԵ-ն խնդրել էր տեղեկություն տրամադրել այն մասին, թե նախարարության կողմից իրականացվող գործողություններում որքանով են հաշվի առնվել «ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի» շրջանակներում պաշտպանական գերատեսչության գործողությունների վերաբերյալ խմբի միջանկյալ զեկույցում ներկայացված առաջարկությունները: Պատասխան գրության մեջ ՊՆ-ից տեղեկացրել են, որ **«...զեկույցում ներկայացված առաջարկություններն ընդհանուր առմամբ համապատասխան վարչությունների կողմից ընդունվել են ի գիտություն: Դրանց որոշակի մասը հաշվի կառնվեն ընթացիկ փոփոխությունների ընթացքում»**:

Ինչպես արդեն ներկայացվել էր միջանկյալ զեկույցում[7], Խմբի կողմից իրականացվող մշտադիտարկումը նպատակ ունի ոչ միայն ուսումնասիրել եւ վերլուծել ՄԻՊ ԳԾ-ի շրջանակներում ընդունված իրավական ակտերը, այլ նաեւ դիտարկել ընդունված իրավական ակտերի կիրառման պրակտիկան եւ դրանց ազդեցությունը շահառու խմբերի իրավունքների պաշտպանության գործում: Այս համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ խմբին հիմնականում չի հաջողվել ստանալ իրավակիրառ պրակտիկան ուսումնասիրելու նպատակով պաշտպանական գերատեսչության կողմից ՄԻՊ 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող որոշ միջոցառումներին ներկա գտնվելու վերաբերյալ ՊՆ-ի պաշտոնական համաձայնությունը:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ն նոյեմբերի 23-ին Ելից-ՊՆ-18/22 գրությամբ դիմել էր պաշտպանության նախարարություն՝ զորակոչի ընթացքում զորակոչային հանձնաժողովների աշխատանքների ժամանակ զորակոչիկների, ինչպես նաեւ զինվորական հոսպիտալներում կամ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում (ԿՌԲՀ) առողջական

7. Տես՝ ՄԻՊ 2017-2019 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ ՊՆ միջոցառումների մշտադիտարկման վերաբերյալ մոնիթորինգի խմբի միջանկյալ հաշվետվությունը. (https://peacedialogue.am/2019/03/16/hrap_interim_r/)

խնդիրների հետեւանքով վաղաժամկետ զորացրվողների հետ հարցազրույցներ իրականացնելու հնարավորություն ստանալու համար: ՊՆ-ն, սակայն, խմբին նման հնարավորություն չի տվել:

Տեղեկանալով, որ այնուամենայնիվ գոյություն ունի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից այս կամ այն նպատակով ՀՀ ՊՆ զորամասեր, զինվորական հոսպիտալներ մուտք գործելու պրակտիկա, կազմակերպությունը 22.07.2019թ. Ելից–ՊՆ-19/5 պաշտոնական գրությամբ խնդրել էր պարզաբանել, թե ՀՀ ՊՆ ենթակայության տակ գտնվող զորամասեր, զինվորական հոսպիտալներ մուտք գործելու, այդտեղ որոշակի գործողություններ կատարելու թույլտվություն կամ համաձայնություն տրամադրելու ընթացակարգ, չափորոշիչներ կամ իրավական հիմքեր առկա՞ են, թե՞ ոչ, ի՞նչ սկզբունքով կամ ի՞նչ փաստական հիմքերով է այս կամ այն կազմակերպությանը թույլատրվում մուտք գործել զորամասեր, զինվորական հոսպիտալներ և այնտեղ որոշակի գործողություններ կատարել:

02.08.2019թ. ՊՆ 510 ԱՂ-803 պատասխան գրությամբ ՀՀ ՊՆ-ից հայտնել են, որ զորամասեր, զինվորական հոսպիտալներ մուտք գործելու, այդտեղ որոշակի գործողություններ կատարելու թույլտվությունը կամ համաձայնությունը տրվում է «ՀՀ ԶՈՒ ՆԾ կանոնագիք» ՀՀ օրենքի[8] 260-րդ հոդվածի համաձայն, որում մասնավորապես ասված է. **«Զինծառայողների ընտանիքների անդամները եւ այլ անձինք գնդի հրամանատարի թույլատվությամբ կարող են այցելել զորանոց, ճաշարան, զորամասի մարտական փառքի (պատմության) սենյակ եւ այլ շինություններ գնդի անձնակազմի կյանքին եւ կենցաղին ծանոթանալու: Նրանց ուղեկցելու եւ անհրաժեշտ բացատրություններ տալու համար նշանակվում են այդ նպատակով նախատեսված զինծառայողներ»**: Ըստ էության, ինչպես երեւում է գրությունից, կազմակերպության հարցերին պատասխան չի տրվել եւ գրությունից հստակ չէ, թե ի՞նչ սկզբունքով կամ ի՞նչ փաստական հիմքերով է այս կամ այն կազմակերպությանը թույլատրվում կամ մերժվում զորամասեր, զինվորական հոսպիտալներ մուտք գործելու թույլտվության տրամադրումը:

Միեւնույն ժամանակ, սակայն, մշտադիտարկման իրականացման ընթացքում խումբը ՀՀ ՊՆ-ի պաշտոնական համաձայնությունն էր ստացել մասնակցելու ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. միջոցառումների ծրագրի 30-րդ կետով սահմանված ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառելու վերաբերյալ գործողության մշտադիտարկման համար: Խմբի անդամներին հնարավորություն էր ընձեռվել մասնակցելու ռազմաուսումնական հաստատություններում մարդու իրավունքների դասաժամերին: Այդ նպատակով նախարությունը ԽԵ-ին էր տրամադրել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում մարդու իրավունքների դասընթացների անցկացման համար պատասխանատու պաշտոնյայի կոնտակտային տվյալները: Նախատեսվում էր, որ նա պետք է տեղեկություն տրամադրեր դասընթացների անցկացման օրերի եւ ժամերի վերաբերյալ: 2019թ. մայիս-հոկտեմբեր ամսիների ընթացքում, այդուհանդերձ, կազմակերպությանն այդպես էլ չհաջողվեց ստանալ վերոնշյալ տեղեկությունները, չնայած,

8. Տես՝ « Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը». (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75199)

որ այդ ժամանակահատվածում կազմակերպության աշխատակիցները հեռախոսազանգերի միջոցով մի քանի անգամ անգամ կապ են հաստատել պաշտոնյայի հետ եւ պարբերաբար խնդրել տրամադրել դասընթացների անկացման օրերի եւ ժամերի հետ կապված մանրամասներ[9]:

«ՄԻՊ ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» 2012 թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ նախագահի կողմից ստորագրված կարգադրության մեջ խոսվում է պետական իշխանության պատասխանատու մարմինների կողմից ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման, մոնիթորինգի և գնահատման ընթացքում քաղաքացիական հասարակությանը ներգրավելու մասին, սակայն, չի առաջարկվում հստակ հայեցակարգ, թե ինչ մեխանիզմով է իրականացվելու նման մշտադիտարկումը ՔՀԿ-ների կողմից: Տպավորություն այնպիսին է, սակայն, որ այդ «ներգրավումը» ենթադրում է ընդամենը ՔՀԿ-ների մասնակցությամբ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի վերաբերյալ քննարկումների կազմակերպում: Հատկապես պաշտպանական գերատեսչության կողմից իրականացվելիք գործողությունների արդյունավետության վերաբերյալ ակնկալել ՔՀԿ-ների բովանդակային լուրջ առաջարկություններն այս պարագայում անիրատեսական է, քանի որ, ոլորտի փակ լինելու արդյունքում, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար իրավահարաբերությունների սուբյեկտների (այս պարագայում՝ զորկակոչիկների, զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց) վրա ընդունված իրավական ակտերի կամ իրականացված միջոցառումների ազդեցությունը ուսումնասիրելու հնարավորությունները խիստ սահմանափակ են: Հարկ է նշել, որ նման բովանդակային առաջարկություններ ստանալու հարցում պետք է շահագրգռված լինեն առաջին հերթին հենց պաշտպանության նախարարության պաշտոնյաները եւ, առհասարակ, պետական գերատեսչությունների ներկայացուցիչները՝ հաշվի առնելով այն փաստը, որ գործողության համար պատասխանատու գերատեսչությունները չեն կարող օբյեկտիվ մոնիտորինգի ենթարկել իրենց իսկ կատարած աշխատանքը: Քաղհասարակության ներգրավմամբ կարելի է ստանալ կատարված աշխատանքի վերաբերյալ անկողմնակալ գնահատականներ, որոնց վրա հիմնվելով հնարավոր է բարձրացնել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակն ու բարեփոխել ոլորտը:

Ինչպես արդեն նշվեց, խմբին հնարավորություն չի տրվել գործողությունների ծրագրի շրջանակներում ՊՆ-ի կողմից իրականացված միջոցառումների ազդեցությունն իրավահարաբերությունների սուբյեկտների վրա ուսումնասիրելու համար: Խումբն արձանագրել է, որ ՔՀԿ-ների կողմից ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող զորամասեր, զինվորական հոսպիտալներ մուտք գործելու թույլտվություն ստանալու չափորոշիչների, ինչպես նաեւ ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. միջոցառումների ծրագրի շրջանակներում պաշտպանական գերատեսչության գործողությունների մշտադիտարկման համար ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության հետեւանքով ՊՆ-ն, ըստ իր հայեցողության, կարող է թույլատրել կամ մերժել մշտադիտարկման նպատակով ՔՀԿ-ների մուտքը զորակոչային հանձնաժողովներ, զորամասեր կամ

9. Սույն կետի վերաբերյալ խմբի մանրամասն ուսումնասիրությունների արդյունքներին եւ եզրակացություններին կարող եք ծանոթանալ հաջորդ բաժնում:

հոսպիտալներ, ինչն զգալիորեն նվազեցնում է ոլորտի մշտադիտարկման հնարավորությունները քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Այս պարագայում ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների հետագա ծրագրի շրջանակներում ՊՆ-ի գործողությունների մշտադիտարկումն ավելի համակարգված դարձնելու համար, հավանաբար, անհրաժեշտ է ավելի սերտ դարձնել համագործակցությունը ՔՀԿ-ների եւ մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականության մշակման եւ իրականացման ոլորտում լիազորություններով եւ գործիքակազմով օժտված այնպիսի մարմինների հետ, ինչպիսիք են Ազգային ժողովը, ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Բացի այդ, նոր մշակվող ՄԻՊ ԳԾ-ում անհրաժեշտ է ՔՀԿ մասնակցությամբ մշակել եւ ամրագրել հստակ մեխանիզմներ ՔՀԿ մասնակցության համար՝ այդ մասնակցությունը դեկլարատիվից իրականի վերածելով:

ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանության նախարարության կողմից իրականացվող գործողությունների ուսումնասիրության արդյունքները

Այս բաժնում ներկայացված են «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում» նախագծի շրջանակներում ձեւավորված մշտադիտարկող խմբի կողմից ՄԻՊ ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ ՊՆ-ի կողմից իրականացվող գործողությունների մշտադիտարկման եւ դրանց արդյունավետության ուսումնասիրության արդյունքները:

Կետ 28. Մշակել մեխանիզմներ զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման համար

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինասավորման աղբյուրը
Բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումները, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական զննության եզրակացության ակտերը տրամադրվում են պարտադիր կարգով:	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	ՀՀ պաշտպանության նախարարություն	2018 թ. առաջին եռամսյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Խմբի դիտարկումները

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 28-րդ կետով սահմանվել է, որ 2018թ. առաջին եռամսյակի ընթացքում պետք է մեխանիզմներ մշակվեն զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման համար: Որպես վերը նշված գործողության ակնկալվող արդյունք՝ սահմանվել է, որ բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումները, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական զննության եզրակացության ակտերը տրամադրվում են պարտադիր կարգով:

Ի պատասխան «Խաղաղության երկխոսության» 2018 թվականի ապրիլի 4-ի հարցման՝ ՀՀ պաշտպանության նախարարության 20.04.2018թ. թիվ ՊՆ/510-ԱՂ-292 գրությամբ որպես զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման մեխանիզմ վկայակոչվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[10] 17-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման հավելված 1-ը:

10. Տես՝ ՀՀ օրենքը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633)

Պաշտպանության նախարարության կողմից մատնանշվող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Նույն պատասխան գրության մեջ նշվող ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ[11] սահմանվում է քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերը՝ համաձայն N 1 հավելվածի: Նշված հավելվածի 35-րդ կետը սահմանում է, որ փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի պատասխանատու անձի) կողմից լրացվում է զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն՝ համաձայն N 3 ձևի, որը հաստատվում է զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի պատասխանատու անձի) ստորագրությամբ: Զինվորական կոմիսարը քաղաքացու կամ նրա օրինական ներկայացուցչի կամ նրա կողմից լիազորված անձի **դիմելու դեպքում** տրամադրում է անձնական գործում առկա զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության պատճենը:

Վկայակոչված իրավանորմերում առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացությունները ստանալը սահմանված է որպես քաղաքացու իրավունք, ինչը նշանակում է, որ բժշկական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացությունն ստանալը օրենսդիրը կապել է անձի կողմից իր իրավունքներից օգտվելու հետ: Օրենսդիրի և գործադիրի կողմից օգտագործված ձևակերպումից հետևում է, որ եթե քաղաքացին չօգտվի իր իրավունքից և քայլեր չձեռնարկի եզրակացությունն ստանալու համար՝ եզրակացությունը նրանչի տրամադրվի:

Հարկ է նշել, որ ՀՀ ՊՆ-ից պատասխան գրությունն ստանալուց հետո, 2018 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված N 1132-Ն որոշմամբ[12] հաստատված «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգի» 26-րդ կետի 4-րդ ենթակետով եւ 28-րդ կետի 4-րդ ենթակետով մասնակիորեն

11. Տես՝ ՀՀ կառավարության որոշումը «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, հետազոտման եւ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում եւ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եւ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձեւերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եւՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636)
12. Տես՝ ՀՀ կառավարության N 1132 Ն որոշումը «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docID=125957)

կարգավորում է խնդիրը, սակայն միայն եզրակացությունների մասով: Ծրագրի 28-րդ կետով սահմանված իրավական մեխանիզմի իրավակիրառ պրակտիկան ուսումնասիրելու նպատակով, 23.11.2018թ. Ելից-ՊՆ-18/22 պաշտոնական գրությամբ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ մշտադիտարկող խմբի համար զորակոչի ընթացքում զորակոչային հանձնաժողովների աշխատանքների ժամանակ քաղաքացիների հետ հարցումներ իրականացնելու հնարավորություն ստանալու նպատակով, սակայն գերատեսչության կողմից խմբին նման հնարավորություն չի ընձեռվել: Չնայած դրան՝ 2018 թվականի ձմեռային եւ 2019 թվականի ամառային զորակոչների ընթացքում 290 զորակոչիկների հետ ունեցած հարցումների արդյունքում խումբը պարզել է, որ հարցվածներից միայն 90-ին է իրենց առողջական վիճակի հետ կապված որևէ փաստաթուղթ տրամադրվել ՝ բժշկական զննության արդյունքները եւ/կամ առողջական վիճակի վերաբերյալ վերջնական եզրակացության ակտերը (տես՝ պատկեր 1):

Պատկեր 1. Ձեզ տրամադրվե՞լ են Ձեր բժշկական զննության արդյունքները և/կամ եզրակացության ակտը:



Այն հարցին, թե կոնկրետ ինչ փաստաթղթեր են տրամադրվել՝ ստացվել է հետևյալ պատկերը, որին, սակայն, պետք է որոշ վերապահումով մոտենալ, քանի որ, զորակոչիկների հետ անմիջականորեն հարցումներ իրականացնող խմբի հավաստմամբ, հարցվողները դժվարանում էին հստակ տարբերակել, թե հատկապես ինչ փաստաթղթեր են իրենց տրամադրվել: Ըստ հարցվողների, տրամադրված փաստաթղթերը պարունակել են (պատկեր 2).

- **հետազոտության արդյունքները եւ եզրակացության ակտը՝ 14 հոգի,**
- **եզրակացության ակտը՝ 33 հոգի,**
- **բժշկական զննության արդյունքները՝ 43 հոգի:**

Պատկեր 2. Ինչ փաստաթղթեր են տրամադրվել:



Այսպիսով, հարցված 290 զորակոչիկներից միայն 47-ին է տրամադրվել առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության ակտը, ընդ որում՝ հարցվածներից 41-ին եզրակացության ակտը տրամադրվել է միայն պահանջելուց հետո (պատկեր 3):

Պատկեր 3. Ձեր առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության ակտը տրամադրվել է Ձեր պահանջի՞ հիման վրա, թե՞ առանց պահանջելու:



Բոլորին, ում տրամադրվել է իրենց առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության ակտը (47 հոգի), այն տրամադրվել է առձեռն:

Պահանջի դեպքում չտրամադրելու պատճառաբանությունները, հիմնականում, եղել են.

- **Կտրամադրվի զինկոմիսարիատում՝ 32 հոգի**
- **Չի պատճառաբանվել որևէ կերպ՝ 8 հոգի**
- **Ստացել են զինկոմիսարիատում դիմում գրելուց հետո՝ 7 հոգի**

Ստորև ներկայացվում են զորակոչիկների մեկնաբանությունները բուժհիմնարկների կողմից իրենց առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության ակտերը տրամադրելու մերժման պատճառաբանությունների վերաբերյալ:

> «Հանրապետականում» և «սրտաբանականում» ասել են. «...մեզ խիստ զգուշացված է, որ ոչ մի թուղթ չտանք զորակոչիկներին, բոլորն ուղարկում ենք զինկոմիսարիատ»:
> Լոռի, ք. Վանաձոր 18 տ.

> Հիվանդանոցում ասել են, որ 10 օրվա մեջ կուղարկեն զինկոմիսարիատ, այնտեղից կարող եք վերցնել: Զորակոչիկին զիկոմիսարիատից զանգահարել են, որպեսզի գնա ծանուցագիրն ստանալու: Զինկոմիսարիատում նա հայտարարել է, որ համաձայն չէ այն եզրակացության հետ, ըստ որ պիտանի է զինծառայության համար և ցանկանում է բողոքարկել՝ հրաժարվում է վերցնել ծանուցագիրը: Զինկոմիսարիատում ասել են, որ եթե չվերցնի այն՝ չեն տրամադրի թաստաթղթերը: Ստիպված է եղել վերցնել ծանուցագիրը, ապա, դիմում գրելուց հետո միայն, ստացել է բոլոր թղթերը, այդ թվում և՝ եզրակացության ակտը:
> ք. Երևան, 18 տ.

> «Էրեբունի» հիվանդանոցում ասել են, որ զննության արդյունքները կուղարկեն զինկոմիսարիատ: Զինկոմիսարիատում, երբ իմացել են, որ ցանկանում է բողոքարկել, դիմումից հետո տրամադրել են միայն բժշկական զննության թղթերը և եզրակացության ակտը:
> Շիրակ, գ. Բայանդուր, 22 տ.

> «Ուռուցքաբանականում» ասել են, որ զինկոմիսարիատ կուղարկեն բոլոր թղթերը: Այնտեղ դիմում գրելուց հետո

է միայն ստացել: Զորակոչիկը պատմել է, որ ողնաշարի վրա 6 սմ երկարությամբ և 3,5 սմ լայնությամբ խալ ունի: Առաջին զննության ժամանակ իրեն ասել են, որ պիտանի չէ ծառայության, սակայն 6 օր անց զանգահարել են և նորից կանչել: «Շահումյանի» զինկոմիսարիատում ասել են, որ, այնուամենայնիվ, պիտանի է ծառայության, բայց սահմանափակումով: Սահմանափակումը՝ արևից և փոշուց հեռու մնալն է: Զորակոչիկը նշել է, որ ունի ողնաշարի ցավ նույնպես, ասել են՝ ոչինչ, կանցնի, գերհոգնածությունից է:

ք. Երևան, 18 տ.

Զորակոչիկին ասել են. «Ուղղակի տես պիտանի՞ ես, թե՞ ոչ... Դա պիտի մեզ մոտ մնա»:

Լոռի, ք. Վանաձոր, 18 տ.

Չարենցավանի զինկոմիսարիատում միայն «կռվով» են կարողացել ստանալ բժշկական թղթերը, որոնք հիվանդանոցից այնտեղ են ուղարկվել: Իսկ եզրակացության ակտը թույլ են տվել միայն հեռախոսով նկարել:

Կոտայք, ք. Չարենցավան 19 տ.

Զորակոչիկը բժշկական զննությունն անցել է «Մալայանի» ակնաբուժական կլինիկայում: Այնտեղ հրաժարվել են տալ բժշկական զննության արդյունքները: Ասել են, որ իրավունք չունեն, իրենց արգելել են զորակոչիկներին որևէ փաստաթուղթ տալ՝ նշելով, որ դրանք կարող են ստանալ զինկոմիսարիատում: Զորակոչիկի ծնողներն անմիջապես զանգահարել են ՊՆ-ի թեժ գիծ, որտեղից հաստատել են, որ իրավունք ունեն ստանալու բոլոր փաստաթղթերը: Դրանից հետո էլ, սակայն, զորակոչիկին չեն տրամադրվել բժշկական զննության արդյունքները: Միայն Հրազդանի զինկոմիսարատում դիմում գրելուց հետո է հնարավոր եղել ստանալ բժշկական զննության արդյունքերն ու եզրակացության ակտը:

Կոտայք, ք.Հրազդան 19 տ.

«Իզմիրլյանում» առանց պահանջելու տրամադրել են բժշկական զննության արդյուքները: Զորակոչիկը ևս մեկ հետազոտություն էլ անցել է Աբովյան քաղաքում գտնվող «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն»-ում: Այստեղ, սակայն, ոչ մի փաստաթուղթ չեն տրամադրել՝ ասելով, որ դրանք կստանա զինկոմիսարիատից: Վերջինում պահանջից հետո տվել են զննության արդյունքները, իսկ եզրակացության ակտի տվյալները բանավոր են հայտնել:

Կոտայք, ք. Աբովյան 18 տ.

Զորակոչիկին ասել են, որ բժշկական զննության թղթերը կարող է ստանալ զինկոմիսարիատից, որ իրենց արգելված է որևէ թուղթ տրամադրել: Զինկոմիսարիատում դիմում գրելուց հետո է ստացել է բժշկական զննության թղթերը և եզրակացության ակտը:

Գեղարքունիք, գ.Վարսեր, 19 տ.

Զորակոչիկը լրացուցիչ զննության է ուղարկվել «Գրիգոր Լուսավորիչ» կենտրոն: Զննությունից հետո ոչ մի փաստաթուղթ չեն տվել, ինքն էլ չի պահանջել, քանի որ վստահ է եղել, որ պիտանի չէ զինվորական ծառայության. 18 տարեկանում սրտի հետ կապված խնդիրների պատճառով արդեն տարկետում ստացել էր և չի էլ կասկածել, որ կարող են իրեն այս անգամ պիտանի ճանաչել: Օրեր անց, սակայն, ծանուցագիր է ստացել, որից հետո, Սևանի զինկոմիսարիատ գնալով, պահանջել է բժշկական զննության արդյունքները և եզրակացության ակտը: Ըստ զորակոչիկի, այնտեղ աշխատակիցները կոպիտ պատասխանել են, որպեսզի գնա եւ ծառայի. «...սիմուլյանտ չես»: Միայն «գլավնիի» (երևի զինկոմը) մոտ մտնելուց և դիմում գրելուց հետո նա վերջապես ստացել է եզրակացության ակտը և բժշկական զննության արդյուքները:

Գեղարքունիք, ք. Սևան, 22 տ.

«Հիվանդանացում ասացին՝ պատճեն կգնա զինկոմիսարիատ, իսկ զինկոմիսարիատում ասացին, որ դա մեր թղթերի մեջ պիտի լինի»:

Լոռի, ք. Վանաձոր, 18 տ.

Գրիգոր Լուսավորիչում ասել են, որ իրավունք չունեն բժշկական զննության արդյունքները տրամադրելու: Ծնողն իր նախաձեռնությամբ վերցրել, կարդացել է: Զննության տվյալներն ուղարկվել են զինկոմիսարիատ, սակայն զորակոչիկը ոչ հիվանդանոցում, ոչ զինկոմիսարիատում չի ստացել բժշկական զննության տվյալները, եզրակացության ակտը: Զինկոմիսարիատում բանավոր ասել են, որ պիտանի է ծառայության: Երբ ծնողը պահանջել է, որ իրեն տան թղթերն՝ ասել են, որ իր երեխայից «վատերին» էլ են տարել ծառայության»: Սեփական միջոցներով լրացուցիչ հետազոտություններ անցելուց հետո, դրանց արդյունքներով դիմել է ՊՆ-ին կից հասարակական խորհուրդ՝ բողոքարկման:

Արմավիր, 18տ.

Այսպիսով, ոչ միայն առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը չեն տրամադրվում զորակոչիկներին իմպերատիվ, պարտադիր կարգով, այլ նաև, փաստաթղթերը պահանջելու դեպքում, նրանք լուրջ խոչընտոտների են հանդիպում:

Եզրակացություններ

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 28-րդ կետի իրականացման վերաբերյալ մշտադիտարկող խմբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրում որպես այս գործողության համար չափորոշիչ դիտարկվել է իրավական ակտի նախագծի ներկայացումը ՀՀ կառավարություն: **Մշտադիտարկող խումբը եկել է եզրակացության, որ այս գործողության համար մշակված կատարման վերստուգելի չափանիշը հնարավորություն չի տալիս չափելու գործողության արդյունքը:**

Խումբը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից որպես բժշկական զննության եզրակացության ակտի զորակոչիկներին պարտադիր տրամադրման մեխանիզմ ներկայացվող իրավական ակտերը չեն ապահովում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշման պահանջների կատարումը, հետևաբար՝ չեն կարող համարվել ՀՀ կառավարության որոշմամբ ակնկալվող արդյունքի իրականացում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 28-րդ կետում, մասնավորապես, օգտագործվել է **«պարտադիր տրամադրում»** եզրույթը, ինչը նշանակում է, որ նախատեսված գործողության կատարման արդյունքում ընդունվող իրավական ակտի բովանդակության մեջ զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրման վերաբերյալ դրույթները պետք է սահմանված լինեն իմպերատիվ ձևով և եզրակացության ակտի տրամադրումը պետք է հանդիսանար **պարտադիր պայման**: ՀՀ կառավարության վերը նշված որոշման մեջ առկա ձևակերպումը ենթադրում է այնպիսի իրավական ակտի ընդունում, որը զորակոչիկներին բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրումը սահմանում է որպես պարտադիր պայման՝ անկախ այն ստանալու պահանջից: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, մինչդեռ, որպես զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման մեխանիզմ դիտարկվող **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»** ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման հավելված 1-ը բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրումը որպես պարտադիր պայման չեն սահմանում:

Գործողությունների ծրագրում նման միջոցառման ներառման տրամաբանությունն, այս պարագայում, հասկանալի չէ: Սա կնշանակեր, որ մինչեւ վերոնշյալ իրավական ակտերի ընդունումը, զորակոչվող քաղաքացիները չեն ունեցել իրենց վերաբերող որոշումները, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական զննության եզրակացության ակտերը բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովներից պահանջելու իրավունք, ինչն այդպես չէ: Ակնկալվում է, որ նման գործողության ներառումը ծրագրում պետք է հիմնավորված լիներ որեւէ ուսումնասիրությամբ եւ վերլուծությամբ, ինչը կհիմնավորեր ՄԻՊ ԳԾ-ում նման գործողության ներառման անհրաժեշտությունն ու առաջնահերթությունը: Մշտադիտարկման խմբին, սակայն, նման վերլուծություն հայտնաբերել չի հաջողվել: Բացի այդ, խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սույն գործողությունը ՄԻՊ ԳԾ-ում ներառելուց հետո անգամ զորակոչվող քաղաքացիներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտերը հիմնականում պարտադիր կարգով չեն տրամադրվում, այդ գործողության ներառումը ծրագրում, այնինչ, արդարացված կլիներ միայն պետության կողմից եզրակացության ակտերի առանց նախապայմանների՝ պարտադիր տրամադրման պարագայում:

Կետ 29. Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
Առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց իրավունքների իրացման համար սահմանվել է փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ, որում պատշաճ արտահայտվել են վաղաժամկետ զորացրման պատճառները:	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2018 թ. առաջին եռամսյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Խմբի դիտարկումները

Գործողությունների ծրագրի 29-րդ կետով նախատեսվել է, որ 2018 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետք է սահմանվի առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ: **Որպես այդ գործողության ակնկալվող արդյունք սահմանվել է, որ առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց իրավունքների իրացման համար սահմանվել է փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ, որում պատշաճ արտահայտվել են վաղաժամկետ զորացրման պատճառները:**

Գործողությունների ծրագրում որպես պատասխանատու մարմին եւ համակատարողներ նշված են ՀՀ պաշտպանության եւ առողջապահության նախարարությունները: «Խաղաղության երկխոսություն» հկ-ն գրավոր հարցմամբ դիմել էր երկու գերատեսչություններին էլ՝ պարզելու կառավարության որոշումով սահմանված այս դրույթի իրականացման հետ կապված նրանցից յուրաքանչյուրի գործողություններն ու պարտականությունները:

Առողջապահության նախարարությունից նախ հեռախոսազանգով, իսկ հետո՝ արդեն պաշտոնական գրությամբ պատասխանեցին, որ նախարարությունն այս ուղղությամբ գործողություններ չի իրականացրել, գրության մեջ տրվող հարցերն էլ առաջարկել էին ուղղել ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Ի պատասխան նույն հարցման՝ ՀՀ պաշտպանության նախարարության 20.04.2018թ. ուղարկված թիվ ՊՆ/510-ԱՂ-292 համարը կրող պատասխանում, որպես առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ

զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետը սահմանող իրավական ակտ, վկայակոչվել են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[13] 29-րդ հոդվածի 3-րդ մասը և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման[14] հավելված 1-ը:

Վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում խումբը պարզել է, որ որպես առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետը սահմանող իրավական ակտ վկայակոչված **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»** ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման հավելված 1-ը առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ժամկետի վերաբերյալ դրույթներ չեն պարունակում:

> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նաև նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը: **Փաստաթղթերի տրամադրման որևէ ժամկետ օրենքի նշված հոդվածը չի սահմանում:**
>
> ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ սահմանվել է քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերը՝ համաձայն N 1 հավելվածի: Հավելվածի 108-րդ կետը սահմանում է դրույթներ միայն այն մասին, որ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (ԿՌԲՀ) եզրակացության պատճենները, վավերացված ԿՌԲՀ-ի կնիքով, տրամադրվում են փորձաքննվողին կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին (ըստ պահանջի):

Նշված հավելվածը ևս առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման որևէ ժամկետ չի սահմանում:

---

13. Տես՝ ՀՀ օրենքը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633)
14. Տես՝ ՀՀ կառավարության որոշումը «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, հետազոտման եւ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում եւ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եւ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձեւերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եւՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636)

Ծրագրի 29-րդ կետով սահմանված իրավական մեխանիզմի իրավակիրառ պրակտիկան ուսումնասիրելու նպատակով, 23.11.18թ. թիվ Ելից-ՊՆ-18/22 պաշտոնական գրությամբ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով մշտադիտարկող խմբին առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրվող անձանց հետ հարցում իրականացնելու հնարավորություն տալ, նրանց հետ հանդիպել զինվորական հոսպիտալներում եւ ԿՌԲՀ նիստերից հետո, սակայն, մինչ ծրագրով նախատեսված նախորդ՝ միջանկյալ զեկույցի նախապատրաստական աշխատանքների ավարտը, գրությունը մնացել էր անպատասխան: Միայն 2019թ.-ի փետրվարի 21-ին է ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի անունից պատասխան (թիվ ՊՆ/510-ԱՂ-182) ստացվել: Վերջինում ասվում էր, որ առողջական խնդիրներով վաղաժամկետ զորացրված անձանց հետ հանդիպումների դեմ առարկություններ չունեն՝ միաժամանակ տեղեկացնելով, որ զորացրվելուց հետո նրանք գտնվում են ՊՆ տիրույթից դուրս: Պատասխանի մեջ լիովին անտեսված էր զինվորական հոսպիտալներում եւ ԿՌԲՀ նիստերից հետո մշտադիտարկման խմբի անդամներին զինծառայողների հետ աշխատելու հնարավորություն տալու կազմակերպության խնդրանքը:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով մշտադիտարկման ընթացքում հավաքագրված փաստերը՝ խումբը նախ եկել է եզրակացության, որ **ինչպես եւ նախորդ գործողության դեպքում, այս կետի համար մշակված կատարման վերստուգելի չափանիշը հնարավորություն չի տալիս չափել գործողության արդյունքը:** Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող նախորդ՝ 2014-2016թթ. գործողությունների ծրագրում[15] ներառված էր նմանատիպ գործողություն (տես գործողություն 110), որը, սակայն, նախանշված ժամկետում չէր իրականացվել եւ, հավանաբար, այդ պատճառով էլ կրկին տեղ էր գտել 2017-2019 թվականների գործողությունների ծրագրում: Նախորդ ծրագրում այս գործողությունը ձեւակերպվել էր հետեւյալ կերպ. **«Օրենսդրորեն սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց պաշտպանական գերատեսչության կողմից փաստաթղթերի տրամադրման 7-օրյա ժամկետ»:** Ակնհայտ է, որ «7-օրյա ժամկետ» եզրույթն ավելի չափելի է դարձնում գործողության արդյունքը, ինչը չի կարելի ասել «ողջամիտ ժամկետ» եզրույթի մասին:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումները, որոնց ՊՆ-ն հղում է արել մշտադիտարկման խմբի հարցումներին իր պատասխաններում, չեն ապահովում 29-րդ կետի պահանջը, քանի որ ժամկետի վերաբերյալ դրույթներ չեն պարունակում: Առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ սահմանող իրավական ակտի բացակայությունն անթույլատրելի մոտեցում է, քանի որ ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի կարգավորումների համաձայն՝ ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի

15. Տես՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 27.02.2014թ. թիվ 303-Ն որոշումը: (https://www.arlis.am/documentview.aspx?docID=92644)

եզրակացությունները կարող են բողոքարկվել դատական կարգով՝ եզրակացության կայացման օրվանից երկամսյա ժամկետում:

Ժամկետ սահմանող իրավական ակտի բացակայության պայմաններում փաստաթղթերը կարող են տրամադրվել ցանկացած ժամկետներում, այդ թվում՝ նաև բողոքարկման համար նախատեսված ժամկետից ուշ, կամ այնպիսի ժամկետում, որ մնացած ժամանակը բավարար չլինի մինչ բողոքարկման համար նախատեսված ժամկետի ավարտը պատշաճ ձևով փաստաթղթեր կազմելու համար: Նշված իրավիճակները կհանգեցնեն քաղաքացիների բողոքարկման իրավունքի խախտման:

Բացի այդ, մշտադիտարկող խումբը կարծում է, որ զինծառայողին տրամադրվող փաստաթղթերի կազմի հետ կապված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի ձևակերպումների միջև առկա են որոշակի հակասություններ: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը, ինչը ենթադրում է առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերի ամբողջական փաթեթի տրամադրում, իսկ ՀՀ կառավարության թիվ 405-Ն որոշմամբ սահմանված 1-ին հավելվածի ձևակերպման մեջ նշված է միայն ԿՌԲՀ-ի եզրակացության պատճենի տրամադրման մասին:

Վերը նշված անհամապատասխանությունը կարող է մեկնաբանվել եւ կիրառվել կամայական ձևով՝ որոշ իրավիճակներում հանգեցնելով քաղաքացիների իրավունքների խախտման:

Ընդ որում, եզրակացության հետ համաձայն չլինելու և եզրակացության դեմ բողոք բերելու անհրաժեշտության դեպքում միայն եզրակացության բովանդակությունը կարող է բավարար չլինել: Պատճառաբանված բողոք կազմելու համար անհրաժեշտ կլինեն նաև եզրակացության կազմման համար հիմք հանդիսացած՝ առողջական վիճակի վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները, հետևաբար՝ նշված երկու ձևակերպումներից առավել ընդունելի է օրենքում նշված ձևակերպումը, որը զինծառայողին հնարավորություն է տալիս ստանալ իր առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

Հարկ է անդրադառնալ նաեւ այն բանին, որ ՊՆ-ն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում եւ նախատեսված կարգով հիմնավոր կերպով չի արձագանքել մշտադիտարկման խմբի գրավոր հարցումներին, մասնավորապես՝ զորակոչի ընթացքում զորակոչային հանձնաժողովների աշխատանքների ժամանակ զորակոչիկների, ինչպես նաեւ զինվորական հոսպիտալներում կամ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում (ԿՌԲՀ) առողջական խնդիրների հետեւանքով վաղաժամկետ զորացրվողների հետ հարցազրույցներ իրականացնելու հնարավորություն ստանալու վերաբերյալ հարցմանը:

Կետ 30. «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառել ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ապահովել հեռաուսուցման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դրա հասանելիությունը

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինասավորման աղբյուրը
Ուսումնական ծրագրերում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնց արդյունքում զինված ուժերի անձնակազմը ստանում է պատշաճ գիտելիքներ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:	«Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառվել է ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում և հեռաուսուցման նպատակով հասանելի է ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում:	ՀՀ պաշտպանության նախարարություն	2018 թ. երրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներ

Խմբի դիտարկումները

Գործողությունների ծրագրի 30-րդ կետով սահմանվում է «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի ներառումը ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ինչպես նաև հեռաուսուցման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դրա հասանելիության ապահովումը: **Գործողության իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ուսումնական ծրագրերում կկատարվեն համապատասխան փոփոխություններ, որոնց արդյունքում զինված ուժերի անձնակազմը կստանա պատշաճ գիտելիքներ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:**

Գործողության մշտադիտարկման նպատակով, 15.10.2018թ. Ելից-ՊՆ-18/19 գրությամբ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն պաշտպանության նախարարությունից խնդրել է տեղեկություն տրամադրել հետեւյալ հարցերի վերաբերյալ.

- Ուսումնական ծրագրերում կատարվե՞լ են, արդյոք, համապատասխան փոփոխություններ, որոնց արդյունքում զինված ուժերի անձնակազմը կստանա պատշաճ գիտելիքներ մարդու իրավունքների

պաշտպանության ոլորտում, եթե այո, ապա որո՞նք են այդ փոփոխությունները,
- Մարդու իրավունքները զինված ուժերում առարկան ներառվա՞ծ է ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ի՞նչ պարբերականությամբ է իրականացվում առարկայի դասավանդումը և ի՞նչ ուսումնական ձեռնարկներով,
- Ի՞նչ կարգով է իրականացվում դասավանդող մասնագետների ընտրությունը,
- Հասանելի՞ է, արդյոք, «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ՀՀ ՊՆ պաշտոնական կայքէջում՝ հեռաուսուցման նպատակով: Կազմակերպությունը խնդրել է ուղարկել համապատասխան հղումը:

09.11.2018 թ. ՊՆ/510-ԱՂ-974 պատասխան գրության մեջ ՊՆ-ն, մասնավորապես, նշել է.

«ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում առարկան ընդգրկվել է «Զինվորական իրավունք» առարկայախմբում՝ որպես առանձին առարկա, որը դասավանդվում է 7-րդ ուսումնական կիսամյակում, 42 ուսումնական ժամ դասընթացի ծրագրով, իսկ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում առարկան դասավանդվում է 1-ին կուրսում՝ 32 ուսումնական ժամ դասընթացի ծրագրով:

Դասընթացի մշակման համար հիմք են հանդիսացել հետեւյալ ձեռնարկները.

1. ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կողմից մշակված «Զինված ուժերում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման եւ անցկացման ուսումնական ձեռնարկը», ք. Երեւան, 2016թ.,
2. Ա. Ռ. Ավետիսյան, Տ. Վ. Սիմոնյան եւ ուրիշներ, «Զինվորական իրավունքի հիմնահարցեր, նյութերի ժողովածու», ք. Երեւան, 2015թ.:

Դասընթացի ծրագրում ներառվել են նաեւ «Զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր», մասնավորապես.

- ԵԽ ՆԿ թիվ 4 հանձնարարականները (2010թ.),
- Զինծառայողների իրավունքներ ԵԽԽՎ-ի թիվ 1742 հանձնարարականը (2006թ.),
- ԵԽԽՎ թիվ 2120 բանաձեւը (2016թ.):

Դասավանդող մասնագետի ընտրությունը կատարվում է մրցույթով՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված «ՀՀ ՊՆ ՌՈւՀ-ում դասախոսական կազմի թափուր պաշտոնների մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգ»-ի համաձայն:

ՄԻՊ ԳԾ-ի 30-րդ կետով սահմանված ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառելու վերաբերյալ գործողության մշտադիտարկման նպատակով, ԽԵ-ն 2018 թվականի նոյեմբերի 23-ին ՊՆ 18/22 պաշտոնական գրությամբ դիմել էր ՀՀ ՊՆ: Այս

տարվա փետրվարի 21-ին 510/ԱՂ-182 պատասխան գրությամբ ՊՆ-ն պաշտոնապես թույլատրել էր խմբի անդամներին մասնակցել իր ենթակայության տակ գտնվող ռազմաուսումնական հաստատություններում մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներին: Այդ նպատակով նախարությունը ԽԵ-ին էր տրամադրել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում մարդու իրավունքների դասընթացների անցկացման համար պատասխանատու պաշտոնյայի կոնտակտային տվյալները՝ դասընթացների անցկացման օրերը եւ ժամերը ճշտելու համար: 2019թ. մայիս-հոկտեմբեր ամսիների ընթացքում, սակայն, կազմակերպությանն այդպես էլ չհաջողվեց ստանալ վերոնշյալ տեղեկությունները նշված պաշտոնյայից, որը պարբերաբար հայտնում էր, որ անպայման կտեղեկացնի կազմակերպությանը դասընթացներն սկսելուն պես: Այդ պատճառով, խմբին չի հաջողվել պարզել, թե արդյո՞ք «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառվել է ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, որպես պարտադիր առարկա, թե՞ դա կրում է մեկանգամյա կամ ժամանակավոր բնույթ:

Եզրակացություններ

Խմբի անդամները ծանոթացել են ՊՆ կողմից տրամադրված ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի «Մարդու իրավունքները զինված ուժերում» դասընթացի ծրագրի եւ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի «Մարդու իրավունքներ» առարկայի ուսումնական ծրագրի հետ եւ գտնում են, որ թեեւ տրամադրված ուսումնական ծրագրերի թեմաները հիմնականում ուղղված են մարդու ընդհանուր իրավունքների հետ ծանոթանալուն, իսկ զինվորական ծառայության հետ կապված զինծառայողի իրավունքները բավարար կերպով արտացոլված չեն ծրագրերում, սակայն, նման ուսումնական ծրագրերով ուսուցումը կազմակերպելու դեպքում հնարավոր կլինի զինված ուժերի անձնակազմին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերող պատշաճ գիտելիքներ տրամադրել: Դասընթացը բավականին ընդգրկուն է եւ լիովին բավարար (պատշաճ ուշադրության դեպքում) ապագա սպաների մոտ ՄԻ տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ, ՄԻ կարեւորության մասին պատկերացումներ տալու եւ դրանց նկատմամբ հարգանքի ձեւավորման համար:

Ի տարբերություն նախորդ 28 եւ 29 կետերի, այս գործողության համար մշակված կատարման վերստուգելի չափանիշը շոշափելի է դարձնում գործողության արդյունքում տեղի ունեցող փոփոխությունը նախնական վիճակի հետ համեմատությամբ:

Չափանիշի ձեւակերպման մեջ նշված է, որ «Մարդու իրավունքները զինված ուժերում» դասընթացի ծրագիրը հեռաուսուցման նպատակով հասանելի է ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում: Ուշացումով, սակայն նյութը (05.08.2019թ. դրությամբ) ՊՆ պաշտոնական կայքում հասանելի[16] է: Մոնիթորինգի խմբի նախորդ հաշվետվության ժամանակ՝ 2018թ.-ի չորրորդ եռամսյակի

16. Տես՝ «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայական ուսումնական ծրագիրը. (http://mil.am/files/LIBRARY/Human_Rights/Մարդու%20իրավունքները%20զինված%20ուժերում.pdf)

ընթացքում, ՊՆ կայքում այն դեռ տեղադրված չէր, չնայած այն բանին, որ գործողության կատարման վերջնաժամկետը 2018թ.-ի երրորդ եռամսյակն էր:

Չնայած այն բանին, որ մշտադիտարկման իրականացման ընթացքում ՀՀ ՊՆ-ի կողմից խումբը պաշտոնապես համաձայնություն էր ստացել մասնակցելու ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում ռազմաուսումնական հաստատություններում տեղի ունեցող մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներին, սակայն խմբին այդպես էլ չի տրամադրվել տեղեկություն դասընթացների մեկնարկի, անցկացման օրերի եւ ժամերի վերաբերյալ, ինչպես նաեւ այդ դասընթացների ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, որպես պարտադիր առարկա, ներառելու մասին: Վերոնշյալ իրավիճակը հիմք է տալիս մտածելու, որ դասընթացներն այդպես էլ տեղի չեն ունեցել, չնայած այն բանին, որ ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնից ստացված տեղեկության համաձայն, այդ դասընթացները տեղի են ունենում եւ ընթանում են բնականոն կարգով:

Կետ 31. Ապահովել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ՝ մշակելով ծանուցագրի հետ միաժամանակ զորակոչիկներին զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու և այլ իրավունքները պարզաբանող հուշաթերթի տրամադրման կարգ

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինասավորման աղբյուրը
Բարձրացել է զորակոչիկների իրազեկվածությունն իրենց իրավունքների վերաբերյալ:	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	ՀՀ պաշտպանության նախարարություն	2018 թ. առաջին եռամսյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներ

Խմբի դիտարկումները

Ծրագրի 31 կետով, մասնավորապես, սահմանվում է. «Ապահովել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ՝ մշակելով ծանուցագրի հետ միաժամանակ զորակոչիկներին զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու և այլ իրավունքները պարզաբանող հուշաթերթի տրամադրման կարգ»: **Որպես արդյունք՝ ակնկալվում է բարձրացնել սեփական իրավունքների վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության մակարդակը:**

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության վերաբերյալ ՀՀ կառավարության պահանջների կատարման մասին տեղեկատվություն ստանալու նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն 04.04.18թ. Ելից-ՊՆ-18/7 գրությամբ գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին: Ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարության 20.04.2018թ. թիվ ՊՆ/510-ԱՂ-292 գրության մեջ նշված է, որ զորակոչիկների իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով, ընթացակարգերը նախատեսվել են

«Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգով», որը հաստատող որոշման նախագիծը պատրաստ է և առաջիկայում կներկայացվի ՀՀ կառավարություն: Պատասխան գրության մեջ խոսքը գնում է ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 4-ի N1132-Ն[17]՝ **«Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին»** որոշման մասին, որը ՊՆ-ի կողմից պատասխանն ուղարկելու պահին դեռ չէր ներկայացվել կառավարությանը:

Այժմ արդեն գործող այս կարգի 19-րդ կետի համաձայն՝ հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում զինվորական կոմիսարիատները պարտադիր ապահովում են ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N1675-Ն, 2018թ. ապրիլի 12-ի NN 430-Ն, 450-Ն, 451-Ն և 457-Ն որոշումների համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի, կազմակերպվող սպայական դասընթացների և ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության պայմանների վերաբերյալ զորակոչիկների իրազեկումը, այդ ծրագրերին, սպայական դասընթացներին ու ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը մասնակցելու ցանկություն հայտնած զորակոչիկների հաշվառումը և օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացումը:

> ՀՀ կառավարության 21.12.2017թ. թիվ 1675-Ն որոշմամբ[18] սահմանված է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած շարքային կազմի պարտադիր զինծառայողի հետ պայմանագիր կնքելու կարգը:
>
> ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 430-Ն որոշմամբ[19] սահմանված են նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները:
>
> ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 450-Ն որոշմամբ[20] սահմանված են սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները:
>
> ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 451-Ն որոշմամբ[21] սահմանված են գիտության և կրթության բնագավառներում

16. Տես՝ «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայական ուսումնական ծրագիրը. (http://mil.am/files/LIBRARY/Human_Rights/Մարդու%20իրավունքները%20զինված%20ուժերում.pdf)
17. Տես՝ ՀՀ կառավարության N 1132 Ն որոշումը «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docID=125957)
18. Տես՝ «ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում եւ պայմաններում զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած շարքային կազմի պարտադիր զինծառայողի հետ պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 21.01.2017թ. թիվ N1675-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118237)
19. Տես՝ «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու եւ տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ N430-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126626)
20. Տես՝ «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ N450-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123792)
21. Տես՝ «Գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն եւ 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ՝ՀՀ կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. N451-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123049)

> նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները:
>
> ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 457-Ն որոշմամբ[22] սահմանված են մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները:

Այսպիսով, ՊՆ կողմից վկայակոչած ՀՀ կառավարության 04.10.2018թ. թիվ 1132-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետում նշված իրավական ակտերը վերաբերվում են միայն երկու իրավունքների՝ **պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքելու և տարկետում ստանալու իրավունքների մասին իրավական կարգավորումներին:** Մինչդեռ, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 31-րդ կետով սահմանված է զորակոչիկներին իրենց իրավունքների (տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու[23] և այլն) և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմների մասին:

Բացի այդ, կարգի 19-րդ կետում նշված չէ զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին **տեղեկացնելու մեխանիզմների մասին**, այլ նշված է ՀՀ կառավարության վերոգրյալ որոշումների համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի, կազմակերպվող սպայական դասընթացների և ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության պայմանների վերաբերյալ զորակոչիկներին իրազեկելու մասին:

> ՀՀ կառավարության 04.10.2018թ. թիվ 1132-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետը սահմանում է, որ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը, որի շրջանակներում զինվորական կոմիսարը, որը կայացնում է որոշում՝ համաձայն N4 ձևի, օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող քաղաքացուն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին՝ զորակոչի վերաբերյալ տվյալները եռօրյա ժամկետում գրանցելով զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյանում՝ համաձայն N 5 ձևի, և որոշման պատճենը տրամադրելով քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին՝ օրենքով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում **վերջինիս ծանուցելով իր իրավունքների մասին**՝ համաձայն NN 6 և 6.1 ձևերի:

---

22. Տես՝ «Մշակույթի եւ արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. N457-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122788)
23. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով բնակավայրին մոտ ծառայելու իրավունքը հանվել է զորակոչվող քաղաքացիների համար նախատեսվող արտոնությունների ցանկից:

ՀՀ կառավարության 04.10.2018թ. թիվ 1132-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 և թիվ 6.1 ձևերը ևս վերաբերվում են սահմանափակ թվով իրավունքների մասին ծանուցմանը. թիվ 6 ձևը՝ **մարտական հերթապահության մեջ չընդգրկվելու իրավունքի** մասին, իսկ 6.1 կետը՝ **եղբայրների միևնույն զորամասում զինվորական ծառայություն անցնելու իրավունքի մասին**: Ընդ որում, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված թիվ 6 ձևը, սահմանելով մարտական հերթապահության մեջ չընդգրկվելու իրավունքի մասին ծանուցում, նշում չի պարունակում անմիջականորեն զորակոչիկներին վերաբերվող այն դրույթի մասին, որ նորակոչիկները չեն կարող ընդգրկվել մարտական հերթապահության մեջ կամ ներգրավվել ռազմական գործողություններում (**«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասություն**):

Խումբը գտնում է, որ առկա է իրավական անորոշություն՝ կապված ՀՀ կառավարության 04.10.2018թ. թիվ 1132-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետում նշված «**օրենքով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում**» ձևակերպման հետ: Կետը սահմանում է, որ զինվորական կոմիսարը որոշում է կայացնում քաղաքացուն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին որոշման պատճենը տրամադրելով քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին՝ օրենքով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում վերջինիս ծանուցելով իր իրավունքների մասին՝ համաձայն NN 6 և 6.1-ին ձևերի: Վերոնշյալ ձևակերպումից հետևում է, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված թիվ 6 և թիվ 6.1 ձևերով սահմանված ծանուցման թերթիկների զորակոչիկներին տրամադրումը պայմանավորված է ինչ-որ պայմանով և նշված ծանուցումները զորակոչիկներին տրամադրվում են ոչ բոլոր դեպքերում: Նման մոտեցումը չի համապատասխանում ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 31-րդ կետին, որը զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմների ապահովումը որևէ պայմանի հետ չի կապում:

Ընդ որում, ՀՀ կառավարության 04.10.2018թ. թիվ 1132-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետով սահմանված պայմանը ևս անորոշ է և իր մեջ պարունակում է կամայականություն դրսևորելու ռիսկեր: Անհասկանալի է, թե զինվորական կոմիսարն ինչ չափորոշիչներով կամ ինչ իրավական ընթացակարգով է որոշելու, թե հատկապես որ զորակոչիկը պետք է օգտվի օրենքով սահմանված իրավունքից:

Այս կապակցությամբ հարկ է նշել նաեւ, որ 2018թ. «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում» նախագծի շրջանակներում կազմակերպված աշխատանքային հանդիպման ընթացքում ՊՆ ներկայացուցիչները ներկայացրեցին նախարարության կողմից տպագրված զորակոչիկների իրավունքները պարզաբանող գրքույկի մեկ օրինակ՝ նշելով, որ գրքույկները տրամադրվում են զորակոչիկներին ծանուցագրերի հետ մեկտեղ: 2019թ. հուլիսի 22-ի, Ելից-ՊՆ-19/7 գրությամբ ԽԵ-ն խնդրել էր ՊՆ-ին տեղեկություն տրամադրել այն մասին, թե այդ գրքույկը ի՞նչ քանակով է տպագրվել և զորակոչի շրջանում տրամադրվու՞մ է զորակոչիկներին, թե ոչ, նպատակ ունենալով պարզել, թե արդյո՞ք գրքույկների տրամադրումը կրելու է շարունակական բնույթ, թե՞ դրանք կտարածվեն մինչեւ գրքույկի տպաքանակի ավարտվելը:

Պատասխան գրությամբ նախարարությունից հայտնել էին, որ 2018թ. ամառային զորակոչի ընթացքում պաշտպանության նախարարությունը տպագրել է զինծառայողների իրավունքների վերաբերյալ **անհրաժեշտ քանակով գրքույկներ**: 2019թ. ընթացքում նման գրքույկների տպագրություն նախատեսված չի եղել:

2018թ. ձմեռային եւ 2019թ. ամառային զորակոչի ընթացքում խմբի անդամների կողմից 290 հարցվածներից զինվորական ծառայության ծանուցում ստացել էին 258-ը, որոնցից միայն 33-ին է տրամադրվել զինծառայողի իրավունքները պարզաբանող հուշաթերթիկ (պատկեր 4):

Պատկեր 4. Ծանուցագրի հետ միասին Ձեզ տրամադրվե՞լ է զինծառայողի իրավունքները պարզաբանող հուշաթերթիկ կամ գրքույկ



Հուշաթերթիկն ստացած ընդամենը 33 զորակոչիկներից 29-ն են ծանոթացել այդ հուշաթերթիկի կամ գրքույկի բովանդակությանը (պատկեր 5):

Պատկեր 5. Դուք ծանոթացե՞լ եք այդ հուշաթերթիկի կամ գրքույկի բովանդակությանը:



Հուշաթերթիկի բովանդակությանը ծանոթացած հարցվողներից (29) ընդամենը 6-ն են գտնում, որ բովանդակությունն «ամբողջովին հասկանալի է», իսկ 23-ն այն գնահատել են «մասամբ հասկանալի»՝ իրենց իրավունքներն իմանալու և պաշտպանելու տեսանկյունից (պատկեր 6):

Պատկեր 6. Որքանո՞վ էր այն հասկանալի/ընկալելի Ձեր իրավունքները իմանալու և պաշտպանելու տեսանկյունից:



Եզրակացություններ

Ելնելով վերոնշյալ նկարագրությունից՝ մշտադիտարկման խմբի եզրահանգումները հետեւյալն են.

Ինչպես եւ նախորդ՝ 28-րդ եւ 29-րդ գործողությունների դեպքում, այս կետի համար մշակված կատարման վերստուգելի չափանիշը եւս գործողության արդյունքը չափելու հնարավորություն չի տալիս:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 31-րդ կետով նախատեսված գործողությունների կատարման ժամկետ է սահմանվել **2018 թվականի առաջին եռամսյակը**, հետևաբար՝ նշված գործողությունը **2018 թվականի երրորդ եռամսյակում** կատարելը հանդիսանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետի խախտում:

ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշումը չի կարող համարվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 31-րդ կետով նախատեսված գործողության պատշաճ կատարումն ապահովող իրավական ակտ, քանի որ.

- **Նշված որոշմամբ սահմանվում է զորակոչիկներին միայն մի քանի իրավունքների մասին ծանուցելու ընթացակարգ: Որոշումը չի սահմանում անգամ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 31-րդ կետում նշված մի քանի իրավունքների ծանուցման մասին կարգավորումներ,**

- **Զորակոչիկների իրավունքների պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ ՀՀ կառավարության որոշման մեջ առհասարակ առկա չեն,**

- **ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշմամբ սահմանված ծանուցման ընթացակարգերի կարգավորումները իմպերատիվ և հստակ չեն: Բացի այդ, ՀՀ կառավարության որոշման բովանդակության համաձայն՝ ծանուցման իրականացումը պայմանավորված է որոշակի հանգամանքների հետ, ինչը չի համապատասխանում ՄԻՊ ԳԾ-ի 31-րդ կետին, որը զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմների ապահովումը որևէ պայմանի հետ չի կապում:**

- **Չնայած այն բանին, որ պաշտպանության նախարարությունը տպագրել էր զինծառայողների իրավունքների վերաբերյալ գրքույկներ, որոնք պետք է տրամադրվեին զորակոչիկներին զորակոչի ընթացքում, 2019թ.-ին նման գրքույկների տպագրություն նախատեսված չի եղել: Այս պարագայում հասկանալի չէ, թե ինչ տեսքով են զորակոչիկներին տրամադրվել հուշաթերթիկները, եւ եթե գոյություն է ունցել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնող հուշաթերթիկի այլ**

ձեւաչափ, ապա ի՞նչ նպատակով են տպագրվել զինծառայողների իրավունքների վերաբերյալ գրքույկները:

Վերոնշյալից հետեւում է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշումը չի կարող նպաստել իրենց իրավունքների վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության բարձրացմանը, հետևաբար չի կարող ակնկալվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 31-րդ կետով սահմանված գործողության արդյունքը:

Կետ 32. Ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
Ստեղծվել են լրացուցիչ երաշխիքներ կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության համար:	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	ՀՀ պաշտպանության նախարարություն	2018 թ. երկրորդ եռամսյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Խմբի դիտարկումները

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 32-րդ կետով նախատեսվում է ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը: **Որպես ակնկալվող արդյունք՝ նախատեսվել է, որ պետք է ստեղծվեն լրացուցիչ երաշխիքներ կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության համար:**

2018թ. հուլիսի 31-ի Ելից-ՊՆ-18/16 գրությամբ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը դիմել էր պաշտպանության նախարարությանը՝ պարզելու համար, թե.

- պատրաստ է արդյոք համապատասխան իրավական ակտի նախագիծը, որը կսահմանի կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքներ,

- ինչ մեխանիզմներ են ստեղծվել կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար,

- կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության համար լրացուցիչ ինչ երաշխիքներ են սահմանվել:

20.08.2018 թ. ՊՆ/510-ԱՂ-692 պատասխան գրությամբ պաշտպանության նախարարությունից պատասխանել են, որ «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի եւ ՀՀ կառավարության 09.09.2017 N483-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 32-րդ կետի համաձայն, մշակման փուլում է գտնվում **«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին»** ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանի նախագիծը, որն ընդունվելուց հետո սահմանված կարգով կհրապարակվի պաշտոնական տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական ակտը ընդունվել է 2019թ.-ի հունվարի 18-ին եւ ուժի մեջ մտել 2019թ.-ի փետրվարի 11-ին: Հարկ է նշել նաեւ, որ 2019 թ.-ի հուլիսի 22-ին ԽԵ-ն Ելից-ՊՆ-19/9 հարցմամբ խնդրել էր տեղեկացնել, թե ե՞րբ է նախատեսվում ՀՀ ՊՆ պաշտոնական կայքէջում հրապարակել դիտորդների խմբում ընդգրկվելու վերաբերյալ հայտարարությունը, որին, սակայն, սույն հաշվետվության նախապատրաստական աշխատանքների ավարտին՝ 2019թ.-ի հոկտեմբերի 22-ի դրությամբ, ՊՆ-ն դեռեւս չի արձագանքել:

ՀՀ պաշտպանության նախարարի 18.01.2019թ. թիվ 1-Ն հրամանի ուսումնասիրություն, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ թեպետ հրամանի ընդունմամբ տեսականորեն կատարվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 32-րդ կետով նախատեսված գործողությունը, սակայն սույն հրամանով հաստատված կարգի ուսումնասիրության արդյունքում խմբի մոտ ծագել են մի շարք հարցեր:

ՀՀ պաշտպանության նախարարի 18.01.2019թ. թիվ 1-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի (այսուհետ՝ Կարգ) 5-րդ կետի համաձայն՝ խմբի կազմում չի կարող ընդգրկվել այն անձը, որն ընդգրկված է այլ դիտորդական խմբում: Այս դրույթը սահմանված է չափազանց ընդհանրական և անորոշ, ինչի հետևանքով, փաստորեն, հասարակական դիտորդների խմբում չի կարող ընդգրկվել ոչ միայն ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի մեկ այլ դիտորդական առաքելություն իրականացնող խմբի անդամը, այլև ցանկացած այլ ոլորտի դիտորդական խմբի անդամ հանդիսացող անձ: Վերոնշյալ հարցի առնչությամբ 2019թ.-ի մարտի 9-ի Ելից-ՊՆ-19/4 գրությամբ ԽԵ-ն խնդրել էր տրամադրել Կարգի 5-րդ կետով նախատեսված սահմանափակման վերաբերյալ պարզաբանումներ: 2019թ.-ի մարտի 25-ի ՊՆ/510-ԱՂ-417 պատասխան գրության մեջ հայտնվում է, որ նման սահմանափակման նպատակն է զերծ մնալ հնարավոր շահերի բախման առաջացման դեպքերից:

Կարգի 12-րդ կետի համաձայն՝ խմբում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է այն անձին կամ կազմակերպությանը, որի գործունեությունն առավել սերտորեն առնչվում է ՀՀ պաշտպանության նախարարության

նպատակներին և խնդիրներին: Վերոգրյալ դրույթի բովանդակությունը մտահոգիչ է այն առումով, որ խմբում ընդգրկվելու նախապատվության հարցը լուծելիս հաշվի է առնվում ոչ թե անձի կամ կազմակերպության գործունեության կապը Կարգի 2-րդ կետով նախատեսված խմբի գործունեության նպատակների հետ, այլ անձի կամ կազմակերպության գործունեության կապը ՀՀ պաշտպանության նախարարության նպատակների և խնդիրների հետ:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ խմբի կազմում ընդգրկվելու նպատակով անձի կամ կազմակերպության ներկայացրած դիմումի մերժումը պետք է պատշաճորեն հիմնավորվի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից: Վերը նշված կետում առկա չէ նշում այն մասին, որ խմբի կազմում ընդգրկվելու նպատակով անձի կամ կազմակերպության ներկայացրած դիմումը մերժելու վերաբերյալ պետք է կայացվի գրավոր վարչական ակտ, ինչը, սակայն, անհրաժեշտ հանգամանք է, քանի որ մերժման հետ համաձայն չլինելու դեպքում անձը կամ կազմակերպությունը կարող է օգտվել մերժումը բողոքարկելու իրավունքից՝ միայն վարչական ակտի առկայության պայմաններում:

Կարգի 14-րդ կետը սահմանում է, որ խումբն իր կազմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է ղեկավար, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեղակալ: Կարգի 5-րդ գլուխը, միաժամանակ, սահմանում է, որ նիստերն անցկացվում են խմբի նախագահի կողմից հաստատված օրակարգով, խմբի նիստի անցկացման օրը, վայրը և ժամը որոշում է խմբի նախագահը: Նման պայմաններում պարզ չէ և Կարգով էլ կարգավորված չէ, թե մինչև խմբի ղեկավարի ընտրությունն ո՞ւմ կողմից է հրավիրում խմբի անդրանիկ նիստը:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ խմբի կազմում ընդգրկվում են հինգից տասը անդամներ, ընդ որում, յուրաքանչյուր կազմակերպությունից խմբում կարող է ընդգրկվել մեկ ներկայացուցիչ: 2019թ. մարտի 9-ի Ելից-ՊՆ-19/4 գրությամբ ԽԵ-ն խնդրել էր պարզաբանել, թե ինչով է պայմանավորված խմբի անդամների թվի ընտրությունը: 2019թ. մարտի 25-ին ուղարկված պատասխան ՊՆ/510-ԱՂ-417 գրության մեջ հայտնվում է, որ դիտորդական խմբի թվաքանակը պայմանավորված է խմբի օպտիմալ գործունեությունը, ինչպես նաեւ կայազորային կարգապահական մեկուսարանների քանակը հաշվի առնելով:

Կարգի 37-րդ կետի համաձայն՝ խմբի նիստերին կարող են հրավիրվել նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Այս կետի ձևակերպումից հետևում է, որ հրավերը պետք է ուղղված լինի կոնկրետ լրատվամիջոցի (լրատվամիջոցների): Այս պարագայում հրավեր չստացած լրատվամիջոցները զրկվելու են դիտորդական խմբի նիստին ներկա գտնվելու և այն լուսաբանելու հնարավորությունից: Նշված խնդրի լուծման նպատակով առավել նպատակահարմար կլիներ Կարգում սահմանել, որ դիտորդական խմբի նիստերը կարող են անցկացվել փակ և բաց, որ դեպքում ցանկացած լրատվամիջոց իրավունք կունենար մասնակցելու բաց նիստերին:

Կարգի 23-րդ կետը սահմանում է, որ խումբը ներկայացնում է եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, որից բացի՝ առանձին դեպքերի վերաբերյալ արձագանքելու ընթացակարգ Կարգով սահմանված չէ:

Եզրակացություններ

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա խումբն արձանագրել է, որ տվյալ գործողության իրականացման համար ժամկետ էր սահմանվել **2018թ. երկրորդ եռամսյակը**, գործողությունը, սակայն, իրականացվել է **2019թ. առաջին եռամսյակում**, ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետի խախտում:

Ըստ խմբի անդամների՝ ՀՀ պաշտպանության նախարարի 18.01.2019թ. թիվ 1-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի 5-րդ կետը, որի համաձայն խմբի կազմում չի կարող ընդգրկվել այն անձը, որը ընդգրկված է այլ դիտորդական խմբում, որևէ հիմնավորում չունի և անհարկի սահմանափակում է նախատեսում ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի հետ որևէ առնչություն չունեցող վայրերի կամ կառույցների գործունեության նկատմամբ դիտորդական առաքելություն իրականացնող խմբերում ընդգրկված անձանց համար:

Խումբը անընդունելի է համարում Կարգի 12-րդ կետով նախատեսված մոտեցումը, ըստ որի խմբում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է այն անձին կամ կազմակերպությանը, որի գործունեությունն առավել սերտորեն առնչվում է ՀՀ պաշտպանության նախարարության նպատակներին և խնդիրներին: Նման մոտեցումը խնդրահարույց է, քանի որ դիտորդական խմբի գործունեությունը պետք է ուղղված լինի կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանությանը, հետևաբար՝ խմբում ընդգրկվելու հարցում պետք է հաշվի առնվի անձի կամ կազմակերպության ծավալած գործունեության կապը դիտորդական խմբի առջև դրված նպատակների, խնդիրների, ինչպես նաև կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության հետ: ՀՀ պաշտպանության նախարարության նպատակները և խնդիրները խմբի անդամների ընտրության փուլում հիմք ընդունելը որևէ տրամաբանություն չունի, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարության առաջնային նպատակները և խնդիրները կապված են պետության պաշտպանության, անվտանգության հետ, ինչը որևէ կերպ չի առնչվում դիտորդական խմբի գործունեության հետ: Բացի այդ, Կարգի 12-րդ կետում առկա է «առավել սերտորեն առնչվում է» ձևակերպումը, ինչը ևս խնդրահարույց է, քանի որ առկա չեն ընտրությունը կանոնակարգող հստակ չափորոշիչներ, և նման ձևակերպման պայմաններում առավել սերտորեն առնչությունը կարող է մեկնաբանվել կամայական ձևով:

Կարգի 13-րդ կետում առկա չէ նշում այն մասին, որ խմբի կազմում ընդգրկվելու նպատակով անձի կամ կազմակերպության ներկայացրած դիմումը մերժելու վերաբերյալ պետք է կայացվի գրավոր վարչական ակտ: Ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը

կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները): Վերոգրյալի հիման վրա Խումբը գտնում է, որ բողոքարկման իրավունքի իրացման նպատակով դիտորդական խմբի կազմում ընդգրկվելու դիմումի մերժումը պարտադիր պետք է ձևակերպվի գրավոր վարչական ակտի ձևով:

Կարգի 14-րդ կետով կարգավորված չէ, թե մինչև խմբի ղեկավարի ընտրությունն ում կողմից է հրավիրում խմբի անդրանիկ նիստը: Համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում խմբի ղեկավարի ընտրությունը կարող է տեղի ունենալ խմբի բոլոր անդամների ծանուցման բացակայության պայմաններում կամ այլ խախտումներով:

Կարգի 23-րդ կետով եռամսյակային և տարեկան հաշվետվություններ ներկայացնելուց բացի՝ առանձին դեպքերի վերաբերյալ արձագանքելու ընթացակարգ սահմանված չէ: Վերոգրյալ կարգավորումների բացակայության պայմաններում անհետաձգելի միջամտություն պահանջող դեպքերի մասին ՀՀ պաշտպանության նախարարին տեղեկացնելու մեխանիզմները բացակայում են, և այդ դեպքերը փաստորեն պետք է տեղ գտնեն միայն տարեկան կամ եռամսյակային հաշվետվություններում:

Կետ 33. Հստակեցնել առանձին հիվանդությունների բնութագրերը/հատկանիշները, որոնց առկայության դեպքում զինապարտը կարող է ձեռք բերել տարկետում

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինասավորման աղբյուրը
Անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել հայեցողական որոշումների/ եզրակացությունների ընդունումը կանխելու համար:	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2019 թ. չորրորդ եռամսյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Խմբի դիտարկումները

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 33-րդ կետով նախատեսվում է հստակեցնել այն առանձին հիվանդությունների բնութագրերն ու հատկանիշները, որոնց առկայության դեպքում զինապարտը կարող է ձեռք բերել տարկետում, արդյունքում՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծել հայեցողական որոշումների/եզրակացությունների ընդունումը կանխելու համար: Գործողության կատարման վերջնաժամկետը սահմանված է 2019թ.-ի չորրորդ եռամսյակը:

Պետք է նշել, որ հիվանդությունների բնութագրերը/հատկանիշները հստակեցվել են դեռեւս 2018 թվականի ապրիլի 12-ին ընդունված ՀՀ կառավարության N 404-Ն[24] եւ 405-Ն[25] որոշումներով եւ լրացվել՝ 2018թ. հուլիսի 10-ի ՀՀ կառավարության թիվ 753-Ն[26] որոշմամբ: 26.09.2019թ.-ին ՊՆ/510-ԱՂ-907 գրությամբ «Խաղաղության երկխոսությանը» ՊՆ-ից հայտնել են, որ ի լրումն պարտավորությունների 33-րդ կետի 2019թ. հուլիսի 25-ի ՀՀ կառավարության թիվ 952-Ն[27] որոշմամբ փոփոխություններ են կատարվել 2018թ. ՀՀ կառավարության թիվ 404-Ն որոշման մեջ:

24. Տես՝ «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաեւ քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=121634)
25. Տես՝ «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եվ բժշկական փորձաքննության, հետազոտման եվ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում եվ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եվ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձեւերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշումը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636)
26. Տես՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն եվ N 405-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 753-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123708)
27. Տես՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի25-ի N 952-Ն որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123708)

Բացի այդ, պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների եւ բարեվարքության կենտրոնից կազմակերպությանը հայտնել են, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների իրականացման ընթացքի վերաբերյալ քաղհասարակության ներկայացուցիչների (այդ թվում՝ նաեւ ԽԵ եւ սույն ծրագրի շրջանակներում ձեւավորված մշտադիտարկման խմբի) կողմից արված առաջարկություններն ուսումնասիրվում են ՊՆ համապատասխան ստորաբաժանումների կողմից: Նաեւ դրանց հիման վրա 404-Ն որոշմանը կից հիվանդությունների ցանկում նոր փոփոխություններ կարվեն, որոնք կներկայացվեն այս տարվա նոյեմբերին:

ՀՀ կառավարության N 404-Ն որոշումն ամբողջացնում է զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը (N 1 հավելված), սահմանում քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները (N 2 հավելված): Հարկ է նշել, սակայն, որ ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 33-րդ կետի շրջանակներում իրականացված գործողությունների ուսումնասիրության ընթացքում խումբը հիմնականում հիմնվել է զորակոչվող քաղաքացիներից եւ նրանց հարազատներից ստացված բողոքների վրա, այսինքն՝ խմբի ուսումնասիրություններն ուղղված են եղել ոչ այնքան N 404-Ն որոշման մեջ ներկայացված հիվանդությունների եվ ֆիզիկական թերությունների կամ պիտանիության աստիճանը որոշող ցանկերի վերլուծությանը, ինչը կպահանջեր ավելի նեղ մասնագիտական, անգամ փորձագիտական մոտեցում, այլ վերոնշյալ իրավական փաստաթղթերով կարգավորվող իրավահարաբերությունների դիտարկմանը: Մեծ առումով՝ խմբի նպատակն է եղել պարզել, թե որքանով են ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 33-րդ կետի շրջանակներում ընդունված իրավական ակտերը նպաստում զորակոչիկների իրավական պաշտպանվածությանը:

Զորակոչվող քաղաքացիներից եւ նրանց հարազատներից ստացված բողոքների արդյունքում «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից նախաձեռնած թիվ ՎԴ5/0017/05/19[28] , թիվ ՎԴ/0485/05/19[29] և թիվ ՎԴ/6694/05/19[30] վարչական գործերի քննության ընթացքում ի հայտ են եկել զորակոչիկների իրավունքների պաշտպանության հետ կապված մի շարք խնդիրներ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զորակոչիկների իրավունքների խախտումների պատճառը ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության ընթացակարգի, մյուս կողմից էլ՝ ոլորտը կարգավորող իրավական դաշտի անկատարությունն է:

Օրինակ՝ Սերյոժա Խաչատրյանի հայցի հիման վրա քննվող թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործով 14.03.2019թ. տեղի ունեցած նախնական դատական նիստի ընթացքում հայցվոր կողմը ներկայացրել է դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն:

28. Տես՝ սույն զեկույցի «Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ» բաժնի առաջին տեղեկանքը (էջ. 73)
29. Տես՝ սույն զեկույցի «Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ» բաժնի երկրորդ տեղեկանքը (էջ. 75)
30. Տես՝ սույն զեկույցի «Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ» բաժնի չորրորդ տեղեկանքը (էջ. 76)

Միջնորդության քննարկման ժամանակ դատական նիստին ներկա ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի ներկայացուցիչը հայտնել է, որ Սերյոժա Խաչատրյանի ոտքերի արատն իր բնույթով այնպիսին է, որ հիվանդի քաշի փոփոխության, ֆիզիկական ծանրաբեռնվածության կամ այլ պատճառներով կարող է փոփոխվել:

> **Զորակոչի ընթացքում անցկացված Սերյոժա Խաչատրյանի բժշկական հետազոտությունների արդյունքում կազմված առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունում, որպես ախտորոշում, նշվել է. «Ձախ ծնկոսկրի patella bi-partita, ֆունկցիայի աննշան խանգարմամբ: Երկկողմանի Hallux-Valgus 1-2-րդ աստիճան, քայլքի աննշան աստիճանի խանգարմամբ»: Մեջբերում առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունից:**

Ստացվում է այնպես, որ որոշակի հիվանդությունների դեպքում հիվանդի առողջական վիճակը կարող է վատթարանալ՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով (քաշի փոփոխություն, ֆիզիկական ծանրաբեռնվածություն եւ այլն): Փաստացի, կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ զորակոչի ժամանակ անձի առողջական վիճակը հնարավորություն տա նրան զորակոչելու պարտադիր զինվորական ծառայության, զորակոչվելուց որոշ ժամանակ անց, սակայն, այս կամ այն պատճառով հիվանդությունը բարդանա և ունենա այնպիսի դրսևորումներ, որոնք զորակոչի ժամանակ առկա լինելու դեպքում նա չէր զորակոչվի զինվորական ծառայության:

Խմբի դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ ոլորտում առկա շատ խնդիրների պատճառը ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության իրականացման կարգի որևէ իրավական ակտով սահմանված չլինելն է, ինչի արդյունքում առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկները հանդիպում են իրենց իրավունքների պաշտպանության հետ կապված իրավական խնդիրների, որոշ դեպքերում՝ նաև այնպիսի իրավիճակների, երբ հանգուցալուծումը ՀՀ օրենսդրությամբ անգամ նախատեսված չէ:

Խմբի կողմից արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացվել է առանց նրա փաստացի առողջական վիճակն ամբողջությամբ պարզելու. չեն իրականացվել անհրաժեշտ բժշկական միջամտությունները:

Հայտնաբերված հիվանդության դեմ բուժում ստանալու նպատակով տարկետում ստացած զորակոչիկը (տառապել է **սուր և անցողիկ փսիխոտիկ խանգարումներից (ներառում է պարանոիդ ռեակցիա, փսիխոգեն պարանոիդ փսիխոզ, ռեակտիվ փսիխոզ, օնեյրոֆրենիա, զառանցանքային բռնկումներ և այլն) (գ) կարճատև և բարենպաստ ընթացքով դեպքեր**) տարկետման ընթացքում չի ստացել համապատասխան բուժում, սակայն տարկետման ժամկետի ավարտին, բուժզննման արդյունքում, հանձնաժողովի կողմից նրա առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ արձանագրվել է առողջական վիճակի բարելավում, որի հիման վրա նա սահմանափակումներով պիտանի է ճանաչվել պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար եւ զորակոչվել:

Խումբն արձանագրել է դեպքեր, երբ զորակոչի ընթացքում զորակոչիկն անցել է մի քանի բժշկական հետազոտություն, որոնց արդյունքներն էականորեն տարբերվել են միմյանցից, սակայն Կենտրոնական բժշկական հանձնաժողովը զորակոչիկի պիտանիության վերաբերյալ որոշումը կայացրել է՝ հիմնվելով այն արդյունքների վրա, ըստ որի քաղաքացին ճանաչվել է սահմանափակումներով պիտանի զինվորական ծառայություն անցնելու համար եւ չորս օրվա ընթացքում զորակոչվել ծառայության՝ առանց լրացուցիչ հետազոտման:

Բացի վերոնշյալը, ուսումնասիրության ընթացքում ստացվել է թվով 5 գանգատ առ այն, որ բժշկական կենտրոնները հրաժարվել են հետազոտել քաղաքացիներին՝ պայմանավորված նրանց զորակոչիկ լինելու հանգամանքով:

Եզրակացություններ

Կատարված դիտարկումների հիման վրա խումբը եկել է հետեւյալ եզրահանգումների.

- **Վերոնշյալ իրավական ակտերում առկա չեն կարգավորումներ ժամանակի կամ այլ ներգործությունների ազդեցության հետևանքով փոփոխվող հիվանդություններով տառապող քաղաքացիների զորակոչը կազմակերպելու համար: Սահմանված չէ այդ հիվանդություններով պարտադիր զինվորական ծառայության զորակոչված անձանց բժշկական հետազոտության կարգ այնպիսի պարբերականությամբ, որն անհրաժեշտ է հիվանդության փոփոխությունների դինամիկային հետևելու համար:**

Հակառակ պարագայում կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ զորակոչվելուց որոշ ժամանակ անց, այս կամ այն պատճառով, զորակոչիկի հիվանդությունը բարդանա և ունենա այնպիսի դրսևորումներ, որոնք զորակոչի ժամանակ առկա լինելու դեպքում նա չէր զորակոչվի զինվորական ծառայության:

Խնդրի լուծման միակ ճանապարհն այժմ հետեւյալն է. նման առանձնահատկություններով հիվանդություններ ունեցող զինծառայողները գանգատների դեպքում դիմում են բուժկետ, որտեղ իրականացվում է բժշկական զննություն: Նշվածը, սակայն, ընդունելի չէ, քանի որ այդպիսով խնդիրը հայտնաբերվում է միայն այն ժամանակ, երբ հիվանդությունն արդեն բարդացել է՝ առաջացնելով գանգատներ:

- **ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության իրականացման կարգի բացակայության հետ կապված հիմնական խնդիրներից է այն, որ չկա հետազոտությունների իրականացման ժամկետների սահմանում, հետազոտությունների իրականացման ժամկետները համապատասխանեցված չեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի[31], ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի[32] կարգավորումների հետ,**

31. Տես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքը». (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264)
32. Տես՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը». (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87705)

ինչի արդյունքում ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի հետ իրավահարաբերություններում զորակոչիկները, փաստացի, զրկվում են օրենքներով նախատեսված երաշխիքներից և դուրս են մնում օրենքների սկզբունքների ազդեցության ոլորտից:

Օրինակ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի IV բաժինը սահմանում է բողոքարկման վարույթը, որով սահմանված են վարչական ակտերի բողոքարկման մինչև 1 տարի ժամկետով բողոքարկման ժամկետներ («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի հոդված 71): Վարչական ակտերի դատական բողոքարկման ժամկետները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով: ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության իրականացման կարգավորումների բացակայության պայմաններում, սակայն, զորակոչիկներին վարչական ակտերի արտադատական կամ դատական բողոքարկման հնարավորություն փաստացի չի տրամադրվում. նրանք կարող են հանձնաժողովի կողմից եզրակացություն կազմելու օրն ստանալ զինվորական ծառայության մեկնելու ծանուցագիր և անմիջապես, հաջորդ օրը, զորակոչվել զինվորական ծառայության:

Թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործով հայցվոր Սերյոժա Խաչատրյանը[33] և թիվ ՎԴ/6694/05/19 վարչական գործով հայցվոր Կոլյա Բաղդասարյանը[34] պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվել ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից իրենց առողջական վիճակի հետազոտությունն իրականացնելուց ընդամենը մի քանի օր անց: Զինվորական ծառայության զորակոչվելուց հետո վերջիններս դատական կարգով վիճարկում են իրենց առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունները, բայց վիճարկվող եզրակացություններն արդեն փաստացի կիրառվում են նրանց նկատմամբ:

Նման իրավիճակը հակասում է վարչական վարույթի իրավական կարգավորումների տրամաբանությանը, քանի որ վարչական ակտը հասցեատիրոջ նկատմամբ պետք է կիրառվի դրա իրավաչափությունը ստուգելուց հետո, ոչ թե ստուգելու ընթացքում:

Ստեղծված իրավիճակում Սերյոժա Խաչատրյանը և Կոլյա Բաղդասարյանն անցնում են պարտադիր զինվորական ծառայություն, սակայն առկա է չփարատված կասկած առ այն, որ վերջիններս զինվորական ծառայություն են անցնում զինվորական ծառայության հետ անհամատեղելի և իրենց կյանքի ու առողջության համար վտանգավոր առողջական խնդիրներով:

ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության ընթացակարգի անկատարության հետևանքով թիվ ՎԴ/0485/05/19 վարչական գործով հայցվոր Մաքսիմ Վարդանյանը[35] հանդիպել է մեկ այլ իրավական խնդրի: ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հետ համաձայն չլինելու պատճառով Մաքսիմ Վարդանյանը հրաժարվել է

33. Տես՝ սույն զեկույցի «Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ» բաժնի առաջին տեղեկանքը (էջ. 73)
34. Տես՝ սույն զեկույցի «Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ» բաժնի չորրորդ տեղեկանքը (էջ. 76)
35. Տես՝ սույն զեկույցի «Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ» բաժնի երկրորդ տեղեկանքը (էջ. 75)

ստանալ զինվորական ծառայության մեկնելու ծանուցագիր: Փաստի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ: Քրեական վարույթն իրականացնող քննիչի կողմից որոշում է կայացվել Մաքսիմ Վարդանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Մեղադրանքն առաջադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը):

Վերը նկարագրված եւ այլ իրավիճակները բացառելու, զորակոչիկների բողոքարկման իրավունքի ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության կարգ, որով կնախատեսվեն առողջական վիճակի հետազոտության այնպիսի ժամկետներ, որոնց շնորհիվ հետազոտության արդյունքում կազմված եզրակացության հետ անհամաձայնություն ունեցող զորակոչիկը կկարողանա օգտվել բողոքարկման իր իրավունքից: Խնդիրն, ընդ որում, վերաբերվում է ոչ թե սոսկ բողոքարկման իրավունքի իրականացմանը, այլ արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովմանը: Անձը, տեսականորեն, կարող է իր առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը **բողոքարկել նաև զինվորական ծառայության զորակոչվելուց հետո (անձամբ կամ ներկայացուցչի միջոցով), սակայն նման կարգով բողոքարկումն արդյունավետ և նպատակին ծառայող համարվել չի կարող, քանի որ ՀՀ օրենսդրության տրամաբանության համաձայն՝ բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը պետք է կասեցվի և չկատարվի այնքան ժամանակ, քանի դեռ վարչական ակտի իրավաչափությունը վերադասության կամ դատական կարգով ստուգման չի ենթարկվել:**

Ուշադրության է արժանի հանգամանքը, որ այլ վարչական մարմինների գործունեության ընթացքում քաղաքացիների բողոքարկման իրավունքն ապահովվում է: Օրինակ՝ վարչական ակտերով քաղաքացուց տուգանք բռնագանձելու դեպքերում վարչական մարմինները վարչական ակտերի պահանջների կատարմանն ուղղված գործողություններ ձեռնարկում են վարչական ակտի դեմ բողոք ներկայացնելու ժամկետները սպառվելուց և վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո:

- **Առողջական վիճակի հետազոտության արդյունքում կազմված եզրակացության հետ անհամաձայնություն ունեցող զորակոչիկների բողոքարկման իրավունքից օգտվելու հնարավորության խոչընդոտ է հանդիսանում նաեւ ՀՀ վարչական դատարանում գործերի քննության երկար տևողությունը:**

Օրինակ՝ թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործով հայցվոր Սերյոժա Խաչատրյանը զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության եւ արդեն շուրջ 9 ամիս գտնվում է զորամասում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ վարչական դատարանում գործերի քննության վերջնաժամկետ կամ այլ ժամկետային սահմանափակում չի նախատեսում, և օրենսգրքով սահմանված է ՀՀ վարչական դատարանում գործերի քննության ողջամիտ ժամկետ: Հաշվի առնելով ՀՀ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը,

դատավորների քանակը և մի շարք այլ հանգամանքներ՝ վարչական գործերի միջին տևողությունը 1-2 տարի է: ՀՀ վարչական դատարանի մարզային նստավայրերում վարչական գործերը քննվում են 6-7 և ավելի տարիներ: Գործով կայացված վերջնական դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացվելու դեպքում գործի քննությունը տևում է ևս 1-2 տարի: ՀՀ վարչական դատարանում գործերի քննության նման տևողությունը մտահոգիչ է և չի բխում դատարանում արդարադատության հայցող քաղաքացիների շահերից: Կապված քննվող վեճի բնույթից՝ գործերի որոշակի տեսակների դեպքում նման իրավիճակը կարող է էական նշանակություն չունենալ գործի մասնակիցների իրավունքների և շահերի համար. օրինակ, երբ քննվում է փոքր չափի տուգանքի վիճարկման հայց, երբ քննվում են ոչ էական գույքային իրավունքների վերաբերյալ վեճեր և այլն: Իրավիճակն այլ է, երբ ՀՀ վարչական դատարանում քննվում են քաղաքացիների կյանքին և առողջությանը վերաբերվող դատական վեճեր: Այդ գործերից են, օրինակ, այն վարչական գործերը, որոնց շրջանակներում դատական ստուգման են ենթարկվում անձի առողջական վիճակի վերաբերյալ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կազմված բժշկական եզրակացությունները: Այս վարչական գործերի կարևորությունը կայանում է նրանում, որ կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա զորակոչիկները ներգրավվում են պարտադիր զինվորական ծառայության: Չի բացառվում, որ առանձին դեպքերում կազմված եզրակացությունները սխալ լինեն, ինչի արդյունքում ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայության ներգրավվեն զինվորական ծառայության հետ անհամատեղելի առողջական վիճակով զորակոչիկներ:

Նման իրավիճակներից խուսափելու ելքը ՀՀ վարչական դատավարությամբ նախատեսված է: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված է երաշխիք, որի հիման վրա ցանկացած վարչական ակտ, որի իրավաչափության վերաբերյալ առկա է վեճ, չկատարվի այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ վարչական ակտի իրավաչափությունը չի ստուգվել դատական կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ՝

1. օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման,
2. այն դեպքերի, երբ վարչական մարմինը վարչական ակտ (ներառյալ՝ վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում) ընդունելիս գրավոր ձևով հիմնավորել է, որ անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից,
3. այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերը նշված պահանջը, սակայն, համատարած անտեսվում և խախտվում է զորակոչի ընթացքում. սեփական առողջական վիճակի վերաբերյալ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացությունները բողոքարկած բոլոր քաղաքացիները զորակոչվում են պարտադիր զինվորական ծառայության:

Այս կապակցությամբ ՊՆ պաշտոնյաները հաճախ նշում են, որ նման իրավական կարգավորումների առկայության պարագայում կա վտանգ, որ բոլոր զորակոչվողները կսկսեն բողոքարկել իրենց առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունների ակտերը, ինչը կխաթարի զորակոչի բնականոն գործընթացը: Այս փաստարկն, այնուամենայնիվ, չի դիմանում որեւէ քննադատության մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ փաստացի սահմանափակվում է բոլոր զորակոչիկների բողոքարկման իրավունքը՝ միայն այն պատճառով, որ հավանականություն կա, որ օրենքի կողմից տրված հնարավորությունից կարող են օգտվել ոչ բարեխիղճ ձեւով:

Կետ 34. Ապահովել զորակոչիկի, զինծառայողի և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (տույժի և այլնի) վերաբերյալ պարտադիր ծանուցումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև մշակել դրանց բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու համակարգ

Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համա-կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
Հիմքեր են ստեղծվել իրենց վերաբերյալ կայացվող որոշումների վերաբերյալ զորակոչիկների, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց իրազեկվածության բարձրացման համար, ինչպես նաև ստեղծվել են կառուցակարգեր նշված որոշումների բողոքարկման համար:	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2018 թ. երրորդ եռամսյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Խմբի դիտարկումները

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 34-րդ կետով որպես 2018 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում կատարման ենթակա գործողություն սահմանվել է զորակոչիկի, զինծառայողի և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (տույժի և այլնի) վերաբերյալ պարտադիր ծանուցման ապահովումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև դրանց բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու համակարգի մշակումը: **Որպես վերը նշված գործողության ակնկալվող արդյունք սահմանվել է, որ հիմքեր են ստեղծվել իրենց վերաբերյալ կայացվող որոշումների մասին**

զորակոչիկների, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց իրազեկվածության բարձրացման համար, ինչպես նաև նշված որոշումների բողոքարկման համար կառուցակարգեր են ստեղծվել:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության վերաբերյալ ՀՀ կառավարության պահանջների կատարման մասին տեղեկատվություն ստանալու նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն Ելից-ՊՆ-18/20 գրությամբ 15.10.18թ. դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին:

Ի պատասխան հարցման՝ ՀՀ պաշտպանության նախարարության 25.10.2018թ. թիվ ՊՆ/510-ԱՂ-914 գրությամբ հայտնվել է, որ նախատեսվում է 2019 թվականին իրականացնել «ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման գործընթաց, որի շրջանակներում օրենսդրորեն հստակ կսահմանվեն զինծառայողների նկատմամբ կիրառված խրախուսանքների և կարգապահական տույժերի վերաբերյալ զինծառայողներին ծանուցելու և դրանց կիրառման ակտերը տրամադրելու նորմերը, ինչպես նաև առավել բովանդակային կշարադրվեն նշված օրենքի՝ կիրառված կարգապահական տույժերի բողոքարկման կարգը սահմանող 47-րդ հոդվածի դրույթները:

Նույն գրության մեջ նաև վկայակոչվել է **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»**[36] ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝

> **քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:**

Նշված իրավանորմի ձևակերպումից արդեն ակնհայտ է, որ բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրումը, որպես պարտադիր պայման, սահմանված չէ: Վկայակոչված իրավանորմում առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացություններն ստանալը սահմանված է որպես քաղաքացու իրավունք, ինչը նշանակում է, որ բժշկական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացությունն ստանալը օրենսդիրը կապել է անձի կողմից իր իրավունքներից օգտվելու հետ: Օրենսդիրի կողմից օգտագործված ձևակերպումից հետևում է, որ եթե քաղաքացին չօգտվի իր իրավունքից և քայլեր չձեռնարկի եզրակացությունն ստանալու համար՝ այն չի տրամադրվի նրան:

ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանի մեջ վկայակոչված մյուս իրավանորմը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասն է:

---

36. Տես՝ ՀՀ օրենքը «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633)

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ շարքային և պահեստազորի սպայական կազմերի զորակոչերի ենթակա քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու եզրակացությունների կամ քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ փորձաքննական եզրակացությունների հիման վրա տրված հրամանները դրանց կայացման օրվանից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Բողոքների ներկայացումը մինչև տրված հրամանների վերանայումը չի կասեցնում այդ հրամանների կատարումը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի կարգավորումները վերաբերվում են ակտերի բողոքարկմանը, սակայն նշված հոդվածը չի նախատեսում դրույթներ ակտերի բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու մասին:

Խմբի անդամների կողմից թվով 290 զորակոչիկների հետ անցկացված հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցվողներից 106-ը համաձայն չի եղել իր առողջական վիճակի հետազոտման արդյունքում տրված եզրակացության հետ, իսկ 22-ն ընդհանրապես չի ստացել կամ չի իմացել եզրակացության մասին (պատկեր 6):

Պատկեր 6. Դուք համաձայն եղե՞լ եք առողջական վիճակի հետազոտման արդյունքում տրված եզրակացությանը:



Բացի այդ, հարցվածներից միայն 32-ն է փաստել, որ ամբողջովին տեղյակ է բողոքարկման կարգից, մնացած 201-ն ընդհանրապես տեղյակ չի բողոքարկման կարգից կամ մասամբ է տեղյակ: Մի մասն էլ՝ 57 հարցվող, ընդհանրապես տեղյակ չէ, որ կարող է բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունները (պատկեր 7):

Այս կապակցությամբ հարկ է նշել նաեւ, որ հարցված քաղաքացիներից 38-ը դիմել են խմբի անդամներին՝ իրենց զննության եզրակացությունը բողոքարկելու համար աջակցություն ստանալու նպատակով: Խմբի փորձագետներն այժմ այդ դիմումների մի մասով զբաղվում են եզրակացությունների դատական կարգով բողոքարկմամբ:

Պատկեր 7. Տեղյա՞կ եք բողոքարկման կարգից, թե ո՞ւմ, ի՞նչ ձևով և ի՞նչ ժամկետներում պետք է դիմեք Ձեր բժշկական զննության եզրակացությունը բողոքարկելու համար:



Ի դեպ, հետաքրքրական է, որ բողոքարկման կարգի հետ ծանոթ 148 զորակոչիկների բավականին մեծ մասը՝ 45 հոգի, կարգի հետ ծանոթացել են հենց զինկոմիսարիատներում (պատկեր 8):

Պատկեր 8. Որտե՞ղ եք ծանոթացել բողոքարկման կարգին:



Հարկ է նշել նաեւ, որ որպես նշված գործողության ակնկալվող արդյունք սահմանվել է, որ պետք է ստեղծվեն կառուցակարգեր **զորակոչիկների, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց** կողմից որոշումների բողոքարկման համար, սակայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»[37] ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի կարգավորումները վերաբերվում են սահմանափակ թվով անձանց.

- **շարքային զորակոչերի ենթակա քաղաքացիներին,**
- **պահեստազորի սպայական կազմերի զորակոչերի ենթակա քաղաքացիներին:**

37. Տես՝ ՀՀ օրենքը «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633)

ՀՀ պաշտպանության նախարարության գրության մեջ վկայակոչված մյուս իրավանորմը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասն է, որը սահմանում է.

> նույն հոդվածի 1-ին մասի համաձայն, շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նաև նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը:

Փաստաթղթերի տրամադրման որևէ ժամկետ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը չի սահմանում:

ՀՀ պաշտպանության նախարարության գրության մեջ վկայակոչված մյուս իրավանորմը ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն[38] որոշմամբ սահմանված փորձաքննության կարգի 36-րդ կետի 4-րդ մասն է:

> ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ սահմանված քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգի 36-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ **բուժհաստատությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:**

ՀՀ կառավարության որոշման վերը նշված դրույթի մեջ օգտագործված է «տեղեկություններ» բառը և որևէ կերպ հստակեցված չէ տրամադրվող տեղեկությունների ձևը:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 34-րդ կետով սահմանված միջոցառումները, խումբը հանգել է եզրակացության, որ ծրագրի 34-րդ կետով նախատեսված գործողությունների կատարման ժամկետ է սահմանվել **2018 թվականի երրորդ եռամսյակը**, հետևաբար նշված գործողությունը 2019 թվականին կատարելը նախ և առաջ հանդիսանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետի խախտում:

---

38. Տես՝ ՀՀ կառավարության որոշումը «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, հետազոտման եւ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում եւ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եւ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձեւերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636)

Ինչպես եւ գործողությունների գերակշռող մասի դեպքում, այս կետի համար մշակված կատարման վերստուգելի չափանիշը գործողության արդյունքը չափելու հնարավորություն չի տալիս:

Քանի դեռ «**ՀՀ ՔՈՒ կարգապահական կանոնագիրք**» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների փաթեթը պատրաստ չէ, հնարավոր չէ կատարել եզրահանգումներ այդ փոփոխությունների և լրացումների հիմնավորվածության մասին:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդրի կողմից օգտագործված ձևակերպումից հետևում է, որ եթե քաղաքացին չօգտվի իր իրավունքից և քայլեր չձեռնարկի եզրակացությունն ստանալու համար՝ այն նրան չի տրամադրվի: Նման իրավակարգավորումը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշման տրամաբանությանը, որի համաձայն զորակոչիկների, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի վերաբերյալ վերջիններիս ծանուցումը և օրինակի տրամադրումը նախատեսված է որպես պարտադիր պայման՝ չպայմանավորված իրավական ակտի հասցեատիրոջ գործողություններով:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված չեն դրույթներ՝ ակտերի բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու մասին:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի կարգավորումները վերաբերվում են միայն շարքային զորակոչերի ենթակա քաղաքացիներին եւ պահեստազորի սպայական կազմերի զորակոչերի ենթակա քաղաքացիներին: Հետևաբար, սուբյեկտների մասով ևս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի կարգավորումները քննարկվող գործողության ակնկալվող արդյունքը չեն ապահովում:

ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով փաստաթղթերի տրամադրման որևէ ժամկետ չի սահմանում: Հետևաբար՝ օրենքի նման իրավակարգավորումը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշման տրամաբանությանը, որի համաձայն ընդունվող իրավական ակտով հստակ կարգավորումներ պետք է սահմանվեն առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետի մասին:

ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ սահմանված քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգի 36-րդ կետի 4-րդ մասով հստակեցված չէ տրամադրվող տեղեկությունների ձևը. տեղեկությունները տրամադրվում են բանավոր, գրավոր, էլեկտրոնային կամ այլ եղանակով: Նույն կերպ կարգավորված չէ տեղեկությունները տրամադրելու եղանակը (փոստով, առձեռն կամ այլ եղանակով), կարգավորված չէ տեղեկությունները տրամադրելու ժամկետը:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ մշտադիտարկող խմբի առաջարկությունները

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միջոցառումների մշտադիտարկման արդյունքում իրականացրած ուսումնասիրությունների եւ եզրակացությունների հիման վրա մշտադիտարկման խումբը մշակել է առաջարկությունների հետեւյալ փաթեթը: Այն կներկայացվի ինչպես պաշտպանության նախարարությանը՝ որպես գործողությունների իրականացման համար պատասխանատու մարմնի, այնպես էլ՝ խորհրդարանի անդամներին, Անվտանգության խորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավման ուղղությամբ գործողություններ իրականացնող տեղական, միջազգային եւ այլ շահագրգիռ կառույցներին ու քաղաքացիներին:

Ներկայացվող առաջարկությունները վերաբերում են ծրագրում ներառված թիվ 28, 29, 30, 31, 32, 33 եւ 34 կետերին: Առաջարկությունները ներկայացված են ըստ փաթեթների՝ գործողություններից յուրաքանչյուրի համար:

Կետ 28. Մշակել մեխանիզմներ զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման համար: Կատարման ժամկետը՝ 2018 թ.-ի առաջին եռամսյակ:

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասում և ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածում զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրումը ձևակերպել որպես պարտադիր պահանջ:

- 2018թ.-ի հոկտեմբերի 4-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված N 1132-Ն որոշմամբ հաստատված՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգի 26-րդ կետի 4-րդ ենթակետում եւ 28-րդ կետի 4-րդ ենթակետում կատարել լրացում, որը մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների եւ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի համար կսահմանի նաեւ զորակոչիկներին վերաբերող որոշումները տրամադրելու վերաբերյալ կարգավորումներ:

- Խումբը գտնում է, որ հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է իրավական ակտով սահմանել փաստաթղթերի տրամադրման եղանակը (առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ այլ):

Կետ 29. Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ: Կատարման ժամկետը՝ 2018 թ.-ի առաջին եռամսյակ:

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով և/կամ ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման հստակ ժամկետ եւ բողոքարկման կարգ: Փաստաթղթերի տրամադրման ժամկետն, ընդ որում,

պետք է լինի հնարավորինս կարճ (7 օրը չգերազանցող ժամկետ), որպեսզի քաղաքացին բավարար ժամանակ ունենա փաստաթղթերն ուսումնասիրելու և պատշաճ ձևով բողոք կազմելու համար:

- Բացի այդ, անհրաժեշտ է իրավական ակտով սահմանել փաստաթղթերի տրամադրման եղանակը (առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ այլ):

Կետ 30. «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառել ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ապահովել հեռաուսուցման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դրա հասանելիությունը: Կատարման ժամկետը՝ 2018 թ.-ի երրորդ եռամսյակ:

- Միջանկյալ զեկույցում այս կետի վերաբերյալ խմբի միակ առաջարկությունն է եղել. **«Մարդու իրավունքները զինված ուժերում» դասընթացի ծրագիրը հեռաուսուցման նպատակով հասանելի դարձնել ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում, ինչպես նախատեսված է գործողությունների ծրագրում:»** Ավարտական զեկույցի նախապատրաստման օրվա դրությամբ առաջարկը հաշվի է առնվել պաշտպանության նախարարության կողմից եւ այս պահին նյութը ՊՆ պաշտոնական կայքում հասանելի է:

- Վերոնշյալից բացի, Կետ 30-ի առնչությամբ խումբն առաջարկում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ՊՆ-ի ենթակայության տակ գտնվող ռազմաուսումնական հաստատություններում մարդու իրավունքների պարապմունքներին մասնակցելու հնարավորություն ընձեռել, անհրաժեշտության եւ հնարավորության դեպքում՝ դասընթացների անկացման գործում ներգրավել իրավապաշտպան ՔՀԿ-ի ներկայացուցիչներին:

Կետ 31. Ապահովել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ՝ մշակելով ծանուցագրի հետ միաժամանակ զորակոչիկներին զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու և այլ իրավունքները պարզաբանող հուշաթերթի տրամադրման կարգ: Կատարման ժամկետը՝ 2018 թ.-ի առաջին եռամսյակ:

- Մշակել զորակոչիկներին իրենց հիմնական իրավունքների մասին ծանուցելու ընթացակարգ:

- Իրավական ակտով սահմանել ծանուցագրի հետ տրամադրվող տեղեկատվական հուշաթերթիկի նմուշի ձեւն ու բովանդակությունը, ինչպես նաեւ դրա պարտադիր, իմպերատիվ ձեւով տրամադրման կարգը:

Կետ 32. Ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը: Կատարման ժամկետը՝ 2018 թ.-ի երկրորդ եռամսյակ:

- ՀՀ պաշտպանության նախարարի 18.01.2019թ. թիվ 1-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի 5-րդ կետի 6-րդ ենթակետում հստակեցնել, թե կոնկրետ որ դիտորդական խմբերում ընդգրկված անձինք չեն կարող ընդգրկվել ՀՀ պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբում՝ սահմանափակումը նախատեսելով միայն ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի դիտորդական առաքելություն իրականացնող խմբերի անդամների համար:

- Նույն կարգի 12-րդ կետով որպես խմբում ընդգրկվելու նախապատվության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանք սահմանել անձի կամ կազմակերպության գործունեության կապը դիտորդական խմբի առջև դրված նպատակների, ինչպես նաև կայազորային մեկուսարաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության հետ: Կամայական մեկնաբանություններից խուսափելու նպատակով Կարգի 12-րդ կետում «առավել սերտորեն առնչվում է» ձևակերպման փոխարեն սահմանել հնարավորինս հստակ չափորոշիչներ:

- Նույն Կարգի 13-րդ կետով սահմանել, որ դիտորդական խմբի կազմում ընդգրկվելու նպատակով անձի կամ կազմակերպության ներկայացրած դիմումը մերժելու վերաբերյալ պետք է կայացվի գրավոր վարչական ակտ:

- Նույն Կարգով սահմանել դիտորդական խմբի անդրանիկ նիստ հրավիրելու ընթացակարգը, սահմանել նիստը հրավիրող անձին, նիստի վերաբերյալ խմբի բոլոր անդամներին ծանուցելու կարգ:

- Նույն Կարգի 37-րդ կետով սահմանել, որ դիտորդական խմբի նիստերը կարող են անցկացվել փակ և բաց, սահմանել բաց նիստերի մասին տեղեկատվությունը հրապարակելու կարգ և սահմանել, որ ցանկացած լրատվամիջոց իրավունք ունի մասնակցելու բաց նիստերին:

- Նույն Կարգով սահմանել անհետաձգելի միջամտության անհրաժեշտություն ունեցող դեպքերի մասին ՀՀ պաշտպանության նախարարին տեղեկացնելու ընթացակարգ:

- Նույն Կարգի 52-րդ կետում առկա է տեխնիկական բնույթի վրիպակ. հղում է կատարված Կարգի 50-րդ կետին, մինչդեռ հղում պետք է կատարել Կարգի 51-րդ կետին:

Կետ 33. Հստակեցնել առանձին հիվանդությունների բնութագրերը/ հատկանիշները, որոնց առկայության դեպքում զինապարտը կարող է ձեռք բերել տարկետում

- Սահմանել ժամանակի կամ որոշակի ներգործությունների ազդեցության հետևանքով փոփոխվող հիվանդությունների ցանկ և սահմանել այդ հիվանդություններով պարտադիր զինվորական ծառայության զորակոչված անձանց բժշկական հետազոտության կարգ

այն պարբերականությամբ, որն անհրաժեշտ է համապատասխան հիվանդության փոփոխությունների դինամիկային հետևելու համար:

- Անհրաժեշտ է սահմանել ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության կարգ, որով կնախատեսվեն առողջական վիճակի հետազոտության այնպիսի ժամկետներ, որ հետազոտության արդյունքում կազմված եզրակացության հետ անհամաձայնություն ունեցող զորակոչիկը կարողանա օգտվել բողոքարկման իրավունքից:

- Այն դեպքերում, երբ զորակոչիկը բողոքարկում է ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից իր առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, այսինքն՝ առկա է վեճ վարչական ակտի իրավաչափության վերաբերյալ, վարչական ակտի կատարումը պետք է կասեցվի և չկատարվի այնքան ժամանակ, քանի դեռ դրա իրավաչափությունը վերադասության կամ դատական կարգով ստուգման չի ենթարկվել: Վարչական ակտը հասցեատիրոջ նկատմամբ պետք է կիրառվի դրա իրավաչափությունը ստուգելուց հետո, ոչ թե ստուգելու ընթացքում:

- Առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկների իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով զորակոչիկների առողջական վիճակին վերաբերվող վեճերի քննության առավելագույն ժամկետ սահմանել՝ 2 կամ 3 ամիս: Նշված առաջարկի հիմնավոր լինելու մասին է վկայում այն, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունումից ավելի ուշ՝ 2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված են գործերի որոշ տեսակների քննության առավելագույն ժամկետներ: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո երեք ամսվա ընթացքում:

Կետ 34. Ապահովել զորակոչիկի, զինծառայողի և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (տույժի և այլնի) վերաբերյալ պարտադիր ծանուցումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև մշակել դրանց բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու համակարգ: Կատարման ժամկետը՝ 2018 թ.-ի երրորդ եռամսյակ:

- Անհրաժեշտ է սահմանել այնպիսի ընդհանրական իրավական կարգավորում, որը սուբյեկտների մասով վերաբերվի և՛ զորակոչիկին, և՛ զինծառայողներին ու նրանց հավասարեցված անձանց, իսկ կարգավորման օբյեկտի և առարկայի առումով ուղղված լինի ոչ թե կոնկրետ դեպք կամ իրավիճակ կարգավորելուն, այլ ձևակերպված լինի այնպես, որ վերաբերվի վերը նշված սուբյեկտներին վերաբերվող բոլոր տեսակի ակտերին:

- Զորակոչիկների, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի մասին պարտադիր ծանուցման ապահովման հետ կապված ևս

անհրաժեշտ է սահմանել այնպիսի իրավական կարգավորումներ, որոնք և՛ սուբյեկտների, և՛ կարգավորման առարկայի մասով լինեն ընդհանրական, վերաբերվեն բոլոր դեպքերին և վերը նշված բոլոր սուբյեկտներին:

- Իրավական ակտի մասին պարտադիր ծանուցումն ապահովելու հետ կապված իրավական ակտի ձևակերպումներում առաջարկվում է առաջնորդվել **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի[39] 59-րդ հոդվածի կարգավորումներով**:

- Մշակել մեխանիզմներ զորակոչիկների, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց կողմից՝ իրենց վերաբերյալ ընդունված որոշումների բողոքարկման իրավունքի մասին տեղեկացնելու համար:

Առաջարկություններ ՄԻՊ ռազմավարությունից բխող հաջորդ փուլերի գործողությունների ծրագրերի մշակման ընթացքում հաշվի առնելու համար.

- Ապահովել ՄԻՊ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերի միջեւ տրամաբանական փոխկապակցվածությունը եւ գործողությունների շարունակելիությունը:

- ՄԻՊ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերի կատարողականների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաեւ համակարգող խորհրդի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքներն ու վերլուծությունները դարձնել հրապարակային (բացառությամբ այն դեպքերի, երբ վերլուծությունների հրապարակումը կհակասի ՀՀ օրենսդրությանը):

- Հստակեցնել ռազմավարության կատարողականի ցուցանիշները, յուրաքանչյուր գործողության կամ միջոցառման համար սահմանել հստակ եւ չափելի ցուցիչներ, ինչպես նաեւ դրանց արդյունավետ մոնիթորինգի եւ գնահատման համար մեխանիզմներ մշակել:

- Սահմանել իրավական հետեւանքներ պետական մարմինների կողմից ռազմավարությամբ նախանշված գործողությունների՝ նախատեսված կարգով եւ ժամկետներում չկատարելու համար:

- Նոր գործողությունների ծրագրի մշակման ընթացքում հաշվի առնել գործողությունների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերը եւ մշակել մեխանիզմներ այդ ռիսկերի չեզոքացման կամ նվազեցման ուղղությամբ:

- Բացի վերոնշյալ առաջարկներից, խումբն անհրաժեշտ է համարում քաղաքացիական հասարակության կողմից Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի մշտադիտարկման համար մեխանիզմի մշակումն ու ներդրումը:

39. Տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264)

Հավելվածներ

Տեղեկանք ծրագրի շրջանակներում նախաձեռնված դատական գործերի վերաբերյալ

Ինչպես արդեն նշվեց զեկույցի «Մշտադիտարկման մեթոդաբանությունը» բաժնում, ծրագրի իրականացման ողջ ընթացքում խմբի անդամ հանդիսացող փաստաբանների կողմից իրավական աջակցություն է ցուցաբերվել թվով 38 քաղաքացիների, որոնցից 5-ի պարագայում ներկայում իրականացվում է նրանց պաշտպանություն եւ ներկայացուցչություն դատական ատյաններում:

Ստորեւ ներկայացվում են ծրագրի շրջանակներում խմբի կողմից նախաձեռնված դատական գործերի համառոտ նկարագրերը:

1. Թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործ ընդդեմ ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի՝ ըստ հայցի Սերյոժա Անդրանիկի Խաչատրյանի, վերջինիս առողջական վիճակի վերաբերյալ կենտրոնական բժշկական հանձնաժողովի 12.12.2018թ. և 24.01.2019թ. եզրակացություններն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Սերյոժա Խաչատրյանն ունի ոտքերի մատների և ծնկահոդերի բնածին արատներ:

Հայցադիմումը ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է 2019թ. փետրվարի 6-ին:

2019թ. փետրվարի 12-ին ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Նշված քաղաքացիական գործով 14.03.2019թ. տեղի է ունեցել նախնական դատական նիստ: Դատական նիստի ընթացքում հայցվոր կողմը ներկայացրել է դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն: Միջնորդության քննարկման ժամանակ դատական նիստին ներկա ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձաքննություն նշանակելու մասին միջնորդության դեմ առարկել է այն հիմքով, որ վիճարկվող եզրակացությունների իրավաչափությունը քննարկելիս պետք է հիմք ընդունվի Սերյոժա Խաչատրյանի ոչ թե ներկայիս առողջական վիճակը, այլ նրա առողջական վիճակը՝ տվյալ եզրակացությունները կազմելու օրվա դրությամբ: Նման պայմաններում նիստը նախագահող դատավորն անհրաժեշտ է համարել, որպեսզի դատարանին ներկայացվեն այն ռենտգեն հետազոտության արդյունքները, որոնց հիման վրա կազմվել են ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի վիճարկվող եզրակացությունները:

Թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործով 14.03.2019թ. դատական նիստը հետաձգվել է, որպեսզի հայցվոր կողմը մինչև հաջորդ դատական նիստն ստանա և դատարանին ներկայացնի անհրաժեշտ ռենտգեն հետազոտության արդյունքները. նշված փաստաթղթերը հնարավոր չի եղել ստանալ, որովհետև ռենտգեն հետազոտության արդյունքները ստանալու համար պահանջվել է Սերյոժա Խաչատրյանի կողմից տրված լիազորագիր:

Ընդ որում, հաշվի առնելով, որ պահանջվելու էին տեղեկություններ անձի առողջական վիճակի վերաբերյալ, լիազորագիրը պետք է լիներ նոտարական կարգով վավերացված, իսկ քանի որ Սերյոժա Խաչատրյանը գտնվում էր պարտադիր զինվորական ծառայության մեջ՝ լիազորագիրը պետք է վավերացված լիներ զորամասի հրամանատարի կողմից:

2019թ. ապրիլի 17-ին ստացվել է Սերյոժա Խաչատրյանի կողմից ուղարկված լիազորագիրը, որը սակայն գրված է եղել հասարակ գրավոր ձևով և զորամասի հրամանատարի կողմից վավերացված չի եղել, ինչի պատճառով նշված լիազորագրի հիման վրա հնարավոր չի եղել ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Հաշվի առնելով պատշաճ լիազորագրի բացակայությունը՝ թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործով 23.04.2019թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում հայցվոր կողմը միջնորդություն է ներկայացրել դատարանին, խնդրել պահանջել վիճարկվող եզրակացությունների հիմք հանդիսացող Սերյոժա Խաչատրյանի ռենտգեն հետազոտության արդյունքները, և դատարանը որոշել է միջոցներ ձեռնարկել բուժհաստատությունից ռենտգեն հետազոտության արդյունքները պահանջելու համար:

Գործով հաջորդ դատական նիստը նշանակվել է 30.05.2019թ., որի ընթացքում դատարանը որոշում է կայացրել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ հայցվոր կողմի միջնորդությունը բավարարել, թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործով նշանակել դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան փորձագետներին:

Փորձագիտական եզրակացություն տալու համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերն՝ ըստ գործում առկա 12.11.2018թ. ռենտգենաբանական հետազոտության արդյունքների (ռենտգեն ժապավենների). Սերյոժա Անդրանիկի Խաչատրյանն ունի՞, արդյոք, ծնկոսկրի և զույգ ոտնաթաթերի հետ կապված առողջական խնդիրներ, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ հիվանդություններ են առկա և որքա՞ն են ծնկոսկրի ֆունկցիայի խանգարման և զույգ ոտնաթաթերի առաջին մատների առաջին նախագարշապարային ոսկրերի նկատմամբ առանցքների թեքվածության աստիճանները:

Եթե փորձաքննության ընթացքում նոր հարցեր ծագեն, որոնք կարող են էական նշանակություն ունենալ փորձաքննությանը վերաբերող հարցերը պարզելու համար, ապա խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Նույն որոշմամբ ՀՀ վարչական դատարանը կասեցրել է թիվ ՎԴ5/0017/05/19 վարչական գործի վարույթը՝ մինչև փորձագիտական եզրակացությունը ստանալը:

Փորձաքննության կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարին, ինչին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ 2019թ. մայիսի 30-ի որոշմամբ նշանակված փորձաքննությունը դեռևս չի կատարվել:

2. Թիվ ՎԴ/0485/05/19 վարչական գործ ըստ հայցի Մաքսիմ Ռոբերտի Վարդանյանի, ընդդեմ ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի՝ Մաքսիմ Ռոբերտի Վարդանյանի առողջական վիճակի վերաբերյալ կենտրոնական բժշկական հանձնաժողովի 08.12.2018թ. և 18.01.2019թ եզրակացություններն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Մ. Վարդանյանը մանկուց ունեցել է տեսողության հետ կապված գանգատներ:

Հայցադիմումը ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է 2019թ հունվարի 25-ին:

2019թ. հունվարի 29-ին ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Նշված վարչական գործով 06.05.2019թ. տեղի ունեցած նախնական դատական նիստի ժամանակ հայցվոր կողմը դատարանին ներկայացրել է դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն: Դատարանը ներկայացված միջնորդությունը բավարարել է, որոշում կայացրել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին՝ փորձաքննության կատարումը հանձնարարելով «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Փորձագետին /փորձագետներին/ պարզաբանման նպատակով առաջադրել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ առողջական խնդիրներ ունի Մաքսիմ Ռոբերտի Վարդանյանը,
- Եթե Մաքսիմ Ռոբերտի Վարդանյանն ունի տեսողության հետ կապված խնդիրներ, այդ խնդիրները բնածի՞ն են, թե՞ ոչ,
- Ունեցած առողջական խնդիրների առկայության պայմաններում Մաքսիմ Ռոբերտի Վարդանյանն արդյո՞ք ենթակա է պարտադիր զինվորական ծառայության՝ ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 404-Ն որոշմամբ սահմանված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի 86-րդ հոդվածի «դ» կետի հիման վրա:

06.05.2019թ. կայացված մեկ այլ որոշմամբ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/0485/05/19 վարչական գործի վարույթը կասեցրել է՝ մինչև նշանակված դատաբժշկական փորձաքննության ավարտը:

Փորձաքննության կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարին, ինչին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ թիվ ՎԴ/0485/05/19 վարչական գործով նշանակված փորձաքննությունը 20.08.2019թ. ավարտվել է և կազմվել է եզրակացություն: Զեկույցի կազմման պահի դրությամբ, սակայն, ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/0485/05/19 վարչական գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ որոշում դեռևս չի ստացվել:

04.04.2019թ. Մ. Վարդանյանը որպես վկա, հարցաքննության նպատակով հրավիրվել է քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր

վարչության 4-րդ կայազորային քննչական բաժին: Նույն օրը վարույթն իրականացնող քննիչի կողմից որոշում է կայացվել Մաքսիմ Վարդանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Մեղադրանքն առաջադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը):

Հարկ է նշել, որ ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հետ համաձայն չլինելու պատճառով Մաքսիմ Վարդանյանը հրաժարվել է ստանալ զինվորական ծառայության մեկնելու ծանուցագիր: Նշված փաստի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ: Քրեական վարույթն իրականացնող քննիչի կողմից որոշում է կայացվել Մաքսիմ Վարդանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Մեղադրանքն առաջադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը): Վարդանյանի առողջական վիճակը պարզելու նպատակով 04.04.2019թ. վարույթն իրականացնող քննիչի կողմից որոշում է կայացվել համալիր դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին: Փորձաքննության արդյունքների մասին որևէ տեղեկատվություն առկա չէ:

3. Թիվ ՎԴ5/0019/05/19 վարչական գործ, ըստ հայցի Ռոբերտ Ավետիքի Հովհաննիսյանի, ընդդեմ ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի՝ Ռոբերտ Ավետիքի Հովհաննիսյանի առողջական վիճակի վերաբերյալ կենտրոնական բժշկական հանձնաժողովի 12.12.2018թ. և 24.01.2019թ. եզրակացություններն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Ռոբերտ Հովհաննիսյանն ունի սրտի բնածին արատ:

Հայցադիմումը ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է 2019թ. փետրվարի 6-ին: Քաղաքացին, սակայն, հրաժարվել է փաստաբանական աջակցությունից՝ զորակոչման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո: Հիմք ընդունելով հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը վերադարձնելու մասին դիմումը՝ 2019թ. փետրվարի 12-ին ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վերադարձնելու մասին, իսկ Հովանիսյանն այժմ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության վայրում:

4. Թիվ ՎԴ/6694/05/19 վարչական գործ, ըստ հայցի Կոլյա Կարոյի Բաղդասարյանի, ընդդեմ ՀՀ կենտրոնական բժշկական հանձնաժողովի՝ Կոլյա Կարոյի Բաղդասարյանի առողջական վիճակի մասին 24.07.2019թ. եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին: 2014թ. Կոլյա Բաղդասարյանը ենթարկվել է վթարի, ինչի արդյունքում կորցրել է գիտակցությունը և ստացել է ուղեղի ցնցում: Այնուհետև, 2016 և 2017 թվականներին, հայցվորը կրկին

ստացել է գլխի հարվածներ (պատճառների մասին մանրամասներ գործում առկա չեն), ինչից հետո գանգատվում է հաճախակի գլխացավերից, ունենում է գլխապտույտներ, աչքերի առջև մթագնումներ և գիտակցության կորստի նոպաներ:

Հայցադիմումը ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է 2019թ. օգոստոսի 23-ին:

2019թ. օգոստոսի 26-ին ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին և 2019թ. հոկտեմբերի 16-ին նշանակվել է նախնական դատական նիստ:

5. Թիվ ՎԴ/0028/05/19 վարչական գործ, ըստ դիմումի Արմեն Սարգսյանի, ընդդեմ ՀՀ կառավարության, 3-րդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 393-Ն որոշմամբ սահմանված «Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների կողմից հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգի» 3-րդ կետի վերջին պարբերությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դիմումը ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է 2018թ. դեկտեմբերի 27-ին:

2019թ. հունվարի 15-ին ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել դիմումը վերադարձնելու մասին՝ այն հիմքով, որ դիմումատուն բաց է թողել դատարան դիմելու ժամկետը: Թիվ ՎԴ/0028/05/19 վարչական գործով Արմեն Սարգսյանի կողմից ներկայացված դիմումը վերադարձնելու համար դատարանը հիմք է ընդունել հանգամանքը, որ դեռևս 2017թ. դեկտեմբերի 5-ի գրությամբ Արմեն Սարգսյանը տեղեկացվել է այն մասին, որ իր ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը կազմում է 2.438.482 ՀՀ դրամ գումար, հետևաբար ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 08-ի թիվ 393-Ն որոշմամբ սահմանված «Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների կողմից հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգի» 3-րդ կետի վերջին պարբերությունն Արմեն Սարգսյանի նկատմամբ առաջին անգամ կիրառվել է ռեալ ակտով՝ 2017թ.-ին ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարը հաշվարկելու գործողությամբ:

Վերոգրյալի հիման վրա դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետն սկսել է հոսել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթի կիրառումն ապահոված 2017 թվականի դեկտեմբեր ամսվա գործողության (ռեալ ակտի) օրվանից հետո, ինչի հիման վրա եզրահանգել է, որ Արմեն Սարգսյանի կողմից բաց է թողնվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով

սահմանված դիմում ներկայացնելու դատավարական ժամկետները:

Դիմումը վերադարձնելու մասին 2019թ. հունվարի 15-ի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ բողոքը բերվել է այն հիմքով, որ Արմեն Սարգսյանի կողմից վիճարկվող նորմի կարգավորումները վերաբերվում են ծախսերի հաշվարկին, որոնք կատարվում են զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ: Վերոգրյալ ձևակերպումից հետևում է, որ վերը նշված իրավական նորմի կիրառման համար հիմք է ընդունվում զինվորական ծառայությունից արձակվելու օրը և նշված իրավանորմը զինծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել ավելի վաղ, քան զինվորական ծառայությունից արձակվելու օրը: Իրավական նորմում նման ձևակերպման առկայության պայմաններում բնական է, որ զինվորական ծառայությունից արձակվելու օրվան նախորդող ժամանակահատվածի վրա նորմի գործողությունը չի կարող տարածվել, հետևաբար անընդունելի է դատարանի այն դիրքորոշումը, որի համաձայն 2018թ. սեպտեմբերի 24-ին զինվորական ծառայությունից արձակված զինծառայողի նկատմամբ վերը նշված իրավանորմի պահանջը կիրառվել է դեռևս 2017 թվականին:

Արմեն Սարգսյանը զինվորական ծառայությունից արձակվել է ՀՀ պաշտպանության նախարարի 2018թ. սեպտեմբերի 24-ի թիվ 1569 հրամանով, հետևաբար Արմեն Սարգսյանի նկատմամբ վերը նշված իրավական նորմի կիրառման օր է հանդիսանում 2018թ. սեպտեմբերի 24-ը: Վիճարկվող իրավանորմի՝ Արմեն Սարգսյանի նկատմամբ կիրառվելու օրվա հետ կապված ցանկացած այլ մեկնաբանություն հակասելու է վիճարկվող իրավական նորմում առկա «զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ» ձևակերպմանը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 2019թ. մարտի 18-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու մասին:

Արմեն Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանում առկա է նաև թիվ ՎԴ/1362/05/18 վարչական գործն ըստ հայցի Արմեն Սարգսյանի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, որով Արմեն Սարգսյանը պահանջում է ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել կատարել իր ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի վերահաշվարկ և փոխհատուցման ենթակա գումարից հաշվանցել պայմանագրային ծառայության ընթացքում ոչ աշխատանքային շաբաթ օրերին աշխատանքի ներգրավելու համար վճարման ենթակա գումարները:

Նշված գործով հայցադիմումը ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է դեռևս 08.02.2018թ.:

Թիվ ՎԴ/1362/05/18 վարչական գործով 01.04.2019թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է վճիռ, որով վճռել է Արմեն Սարվանի Սարգսյանի հայցը բավարարել, պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել Արմեն Սարգսյանի ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի վերահաշվարկ և փոխհատուցման ենթակա գումարից հաշվանցել պայմանագրային ծառայության ընթացքում ոչ աշխատանքային շաբաթ օրերին աշխատանքի ներգրավելու համար վճարման ենթակա գումարները:

Թիվ ՎԴ/1362/05/18 վարչական գործով 01.04.2019թ. վճռի մի մասի դեմ ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ բողոքն ընդունվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վարույթ և դատական նիստը նշանակվել է 2020թ. մարտի 5-ին:

Թիվ ՎԴ/1362/05/18 վարչական գործով 01.04.2019թ. վճռի չբողոքարկված մասի հետ կապված Արմեն Սարգսյանի կողմից դեռևս 20.06.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարությանը ներկայացվել է դիմում, որով վերջինս խնդրել է կատարել վճռի պահանջները՝ չբողոքարկված մասով: Մինչ օրս ՀՀ պաշտպանության նախարարությունը վճռի պահանջները կատարելուն ուղղված որևէ գործողություն չի ձեռնարկել, ինչպես նաև չի պատասխանել գրությանը: